Ազգ
Azg
14 ՅՈՒՆԻՍ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 108(4727)
ISSN: 1829-1651


# Հայոց ցեղասպանության օրինագիծը վերստին Ներկայացուցիչների պալատի օրակարգում

Այդ մասին Վաշինգտոնից տեղեկացրել է քրդական ANF նորությունների գործակալությունը, որի հաղորդագրության մեջ նշվում է. «Հայոց ցեղասպանության օրինագիծը, որը լարվածություն էր առաջացրել ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում, վերստին կներկայացվի ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատ: Ստացած տեղեկությունների համաձայն, Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը նամակ է հղել կոնգրեսականներին, որպեսզի հունիսի 14-ին օրինագիծը մտնի Կոնգրես: Նամակում կոչ է արվում «Ներկայացուցիչների պալատի Հայոց ցեղասպանության ճանաչման» օրինագծի համար կազմակերպել ստորագրահավաք եւ նշվում է, որ այս նոր օրինագիծը համահունչ է լինելու նախորդ տարվա օրինագծին: Նամակում Հայոց ցեղասպանությունը բնութագրվում է որպես պատմական փաստերով հաստատված իրողություն, միաժամանակ նշվում է, որ այդ իրողությանը 1915-ի իրադարձություններին անդրադառնալիս արձանագրել են Օսմանյան Թուրքիայում ծառայող ամերիկացի դիվանագետներն ու ժամանակակից ամերիկյան թերթերը»: Հ. Չ.

# Վրաց եկեղեցու նկրտումները Հայաստանում



Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Այս այցելությունը ցույց տվեց, որ մեր փոխհարաբերությունները առավել զարգանում են ու անցնում մի նոր փուլ, ինչը ենթադրում է Վրաստանում Հայ առաքելական եկեղեցու եւ Հայաստանում Վրաց առաքելական ուղղափառ ինքնուրույն եկեղեցու իրավական կարգավիճակի համաչափ որոշում, ինչպես նաեւ փոխգործակցություն՝ բացելով պարիտետային սկզբունքով Վրաստանում հայկական (Գրիգորյան) տաճարները, իսկ Հայաստանում վրացական եկեղեցիները»: Ոչ ավել, ոչ պակաս, ըստ վրացական առաջատար գրեթե բոլոր լրատվամիջոցների, այսպիսի փաստաթղթային ամրագրում է ստացել Հայոց կաթողիկոսի պաշտոնական այցելությունը Վրաստան: Բարեբախտաբար դա չհաստատվեց Հայ եկեղեցու կողմից: Ընդհակառակը, Մայր աթոռի տեղեկատվական համակարգի ղեկավար տեր Վահրամ քհն. Մելիքյանը երեկ հերքել է դա «Հայլուրի» թղթակցին պատասխանելիս եւ ասել, որ Վեհափառ հայրապետի այցի ավարտին հավանաբար միացյալ կոմյունիկե ստորագրվի:

Այսուհանդերձ, վրացական լրատվամիջոցների պնդմամբ հունիսի 11-ին «ստորագրված» կոմյունիկեի տեքստը ցույց է տալիս այն նկրտումները, որ ունեն վրաց եկեղեցին ու պետությունը Հայաստանում՝ ի դիմաց Վրաստանում Հայ եկեղեցուն ինչ-որ «զիջումներ» անելուն: Ըստ այդ տեքստի, հայոց եւ վրաց հոգեւոր առաջնորդները համաձայնել են, որ վերը նշվածը կարգավորելու համար անհրաժեշտ են համարում նախ ստեղծել միջեկեղեցական երկկողմ հանձնաժողով, ինչպես նաեւ խնդրանքով դիմել հայ եւ վրաց իշխանություններին՝ «աջակցելու հիշյալ կոմյունիկեի իրագործմանը»:

*Տես էջ 2*

ՀԱՅՏՆԻ ԿԵՆԴԱՆՈՒ ՆՄԱՆ

# Ֆազիլի վազելը

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԼՂՀ-ՀՀ միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի՝ օրերս Երեւանում գումարված հերթական նիստն, իհարկե, ադրբեջանական կողմի ուշադրությունից չէր կարող վրիպել: Բայց հարեւան երկրում արդեն ավանդույթ է դառնում, որ քաղաքական գործիչներն իրենց հայտնի կենդանու տեղ դնեն: Այդ «պատվավոր» գործում իր դերն ունեցավ նաեւ խորհրդարանական Ֆազիլ Մուստաֆաեւը, որին իշխանությունները վերապահել էին ՀՀ ԱԺ նախագահի Հովիկ Աբրահամյանի ելույթը մեկնաբանողի, այսինքն՝ հայտնի կենդանու «առաքելություն», քանի որ իրավիճակին անծանոթ մեկը կարող է տպավորություն ունենալ, թե ՀՀ ԱԺ նախագահը «հենց այնպես» է հայտարարել, որ «ԼՂՀ-ն վաղ թե ուշ կդառնա միջազգային իրավունքի ճանաչված սուբյեկտ»:

Իրականում Հովիկ Աբրահամյանը նման արդարացի տեսակետ հնչեցրել է ԼՂՀ ԱԺ պատվիրակության հետ հանդիպման ժամանակ: Իսկ Ֆազիլ Մուստաֆաեւը դրանից «եզրակացրել է», որ «Հայաստանը պետք է, վերջապես, ճիշտ ճանապարհ ընտրի՝ միջազգային իրավունքի ճանաչման ճանապարհը»: Իսկ մի՞թե միջազգային իրավունքը խանգարում է ասել, որ Լեռնային Ղարաբաղը կդառնա միջազգային իրավունքի ճանաչված սուբյեկտ: Որտե՞ղ է գրված, որ «նման բան ասել չի կարելի», ինչո՞վ է Հայաստանը «խախտել միջազգային իրավունքը»:

Ընդհակառակը, հենց միջազգային իրավունքի հիման վրա էլ Հայաստանը գտնում է, որ Լեռնային Ղարաբաղը միջազգայնորեն կճանաչվի: Քանի որ միջազգային իրավունքը չի մերժում հռչակված պետության՝ ճանաչման ձգտելու եւ արժանանալու իրավունքը:

Այդ մասին շատ պարզ ասված է Կոսովոյի հարցով ՄԱԿ-ի Միջազգային դատարանի խորհրդատվական որոշման մեջ, որ «Կոսովոյի անկախության հռչակումը չի հակասում միջազգային իրավունքին»: Կա՞ ավելի հեղինակավոր միջազգային ատյան, քան Միավորված ազգերի կազմակերպությունն է: Ոչ, չկա: Ահա այդ ամենահեղինակավոր ատյանի ընդունած «Միջազգային իրավունքի սկզբունքների մասին» հռչակագրում սեւով սպիտակի վրա գրված է, որ բոլոր պետությունները պետք է հարգեն ինքնորոշման իրավունքը, իսկ ինքնորոշվող հանրությունն իրավասու է դիմել եւ աջակցություն ստանալ այն դեպքում, երբ նրա այդ իրավունքը խախտվում է:

Խախտե՞լ է Ադրբեջանը ԼՂ ինքնորոշման իրավունքը: Խախտել է: Այն էլ ինչպես է խախտել: Նախ լուծարել է ԼՂ ինքնավարությունը, ապա ուժով փորձել հպատակեցնել ինքնորոշված ժողովրդին, վերջում էլ սեփական սահմանադրությամբ ամրագրել, որ «ունիտար պետություն է»: Այս դեպքում ի՞նչ է մնում Լեռնային Ղարաբաղին, եթե ոչ պնդել ինքնորոշման իրավունքի գերակայությունը եւ դիմել ու աջակցություն ստանալ: Եվ շատ բնական է, որ այդ աջակցությունն առաջինը Հայաստանն է ցուցաբերում՝ ելնելով «Միջազգային իրավունքի մասին» ՄԱԿ-ի հռչակագրով իրեն վերապահված իրավունքից:

Բայց այսքանը, ցավոք, հասու չէ իրեն հայտնի կենդանու տեղ դրած Ֆազիլ Մուստաֆաեւին, որը, կատարելապես մտնելով դերի մեջ, սպառնում է. «Եթե նրանք (Հայաստանը- Վ.Ա.) շարունակեն պնդել երկրորդ հայկական պետության, այսինքն՝ սեպարատիստական ԼՂՀ անկախության ճանաչումը, ապա կկորցնեն առաջին եւ միակը՝ Հայաստանի Հանրապետությունը:»:

Ի՞նչ է սա: Խելագարությու՞ն: Ոչ: Այդպես միայն հայտնի կենդանին է չորս ոտքով համառում:

Բայց նույնիսկ հայտնի կենդանու մասին է ասված, որ «միայն մեկ անգամ է ցեխի մեջ մնում»: Իսկ Ֆազիլը շարունակում է քառատրոփ վազել դեպի այն ցեխը, որտեղ մի անգամ ոտից մինչեւ գլուխ խայտառակաբար թաղվել է:

# Կարեւորը ռազմական հակամարտությունից խուսափելն է

ԵԱՀԿ նախագահող Լիտվայի դեսպան **Գեդրիուս Ապուոկասը** ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնում տեղի ունեցած հանդիպման ժամանակ հույս հայտնեց, որ հունիսի վերջին Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ հանդիպմանը հնարավոր կլինի ԼՂ հակամարտության լուծման հիմնարար սկզբունքների շուրջը հասնել համաձայնության: «Նախորդ հանդիպմանը որոշ հարցերում առաջընթաց է արձանագրվել: Հիմա հույս կա, որ առաջընթաց կգրանցվի հիմնարար սկզբունքների հավանության շուրջը»:

Դիվանագետի գնահատմամբ՝ ամենակարեւորը Ղարաբաղում ռազմական գործողություններից խուսափելն է: Որպես ԵԱՀԿ նախագահող երկիր՝ Լիտվայի ուշադրությունն ուղղված է սառեցված հակամարտությունների լուծմանը: «Սակայն խնդրի կարգավորման վերջնական լուծումը կախված է ԵԱՀԿ Մինսկի խմբից եւ հակամարտության կողմերից»:

Ապուոկասի գնահատմամբ՝ մեծ ուշադրություն պետք է դարձվի հատկապես հակամարտող կողմերի միջեւ վստահության ամրապնդմանը: Դեսպանն այդ ուղղությամբ զարգացումներ նկատում է, սակայն դրանք բավարար մակարդակի վրա չեն: Հ. Հ.

# ԱՄՆ փոխպետքարտուղար. «Առաջիկա ընտրությունները Հայաստանի համար բախտորոշ են լինելու»

Հայաստան ժամանած ԱՄՆ պետքարտուղարի ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ աշխատանքի հարցերով տեղակալ Թոմաս Մելինան, երեկ ժամանեց նաեւ Գյումրի: Մինչ այդ Մելինան հանդիպումներ էր ունեցել Հայաստանի իշխանության եւ ընդդիմության ներկայացուցիչների հետ: Իսկ Գյումրիում, ինչպես տեղեկացնում է 7or.am լրատվական կայքը, պատասխանելով լրագրողների հարցերին, Մելինան, խոսելով իշխանություն-ՀԱԿ երկխոսության մասին, նշել է. «ԱՄՆ կառավարությունը միշտ քաջալերում է երկխոսությունը: Ճիշտ է՝ մենք ոչ մի երկխոսության մեջ առայժմ որպես միջնորդ հանդես չենք գալիս, սակայն մշտապես քաջալերում ենք իշխանություններին՝ երկխոսել տարբեր քաղաքական ուժերի հետ»: Այնուհետեւ, անդրադառնալով ժողովրդավարության ընդհանուր պատկերին մեր երկրում, ԱՄՆ փոխպետքարտուղարը նշել է. «Հայաստանը հնարավորություն ունի ավելի մոտ լինելու Եվրոպային եւ ԱՄՆ-ին: Այս հանգամանքը կախված է հաջորդ տարի տեղի ունենալիք ընտրական գործընթացներից: Հակառակ պարագայում (նկատի ունի ոչ թափանցիկ եւ ոչ ժողովրդավարական ընտրական գործընթացը-Հ. Ա.) ձեր երկիրը կընտրի սեփական մեկուսացումը եւ հեռու կկանգնի արեւմտյան արժեքներից: Կարծում եմ, որ այս առումով առաջիկա համապետական ընտրությունները բախտորոշ են լինելու Հայաստանի համար: Քանի որ ինչքան արժանահավատ լինեն այդ ընտրությունները, այդքան մարդիկ կցանկանան մնալ իրենց երկրում, իրենց ընտանիքների հետ: Բացի սրանից՝ արտաքին մեծ ներդրումներ կլինեն Հայաստանում, եւ մարդիկ ուղղակի չեն ցանկանա լքել Հայաստանը», եզրափակել է Մելինան՝ փոքր-ինչ «սպառնալի», փոքր-ինչ նախազգուշացնող ձեւակերպումներով:

Հ. Ա.

# Ամերիկյան հածանավ Սեւ ծովում

*ՌԴ ԱԳՆ-ի մեկնաբանությունը*

**ՌԴ արտգործնախարարությունը մտահոգություն է արտահայտել Սեւ ծովում ամերիկյան «Մոնտերեյ» հածանավի հայտնվելու կապակցությամբ: ԱԳՆ-ի կայքում հրապարակվել է համապատասխան մեկնաբանությունը: Այնտեղ նշվում է, որ հածանավը Ուկրաինայի տարածքային ջրեր է մտել ուկրաինա-ամերիկյան «Սի բրիզ-2011» զորավարժություններին մասնակցելու:**

**Այնուհետեւ մեկնաբանության մեջ ընդգծվում է, որ 2011-ի մարտին «Մոնտերեյն» ուղարկվել էր Միջերկրական ծով, որտեղ Եվրոպայում ծավալվող ամերիկյան հակահրթիռային համակարգի մասը կազմի: «Մոնտերեյը» հանդերձավորված է «Իջիս» համակարգով, որը նավին թույլ է տալիս 190 կմ շառավղով հետեւել միաժամանակ 100-ից ավելի թիրախների:**



**Սեւծովյան ջրերում հակահրթիռային հածանավի հայտնվելը մտահոգում է Մոսկվային, որը տարօրինակ է համարում սովորական «այցելության» համար հենց այդպիսի ռազմանավի ընտրությունը: «Զորավարժությունների սցենարն ինչպիսի՞ դեր է նախատեսում «Մոնտերեյի» հակահրթիռների համար», հարց է տրվում ԱԳՆ-ի մեկնաբանության մեջ:**

**ՌԴ սահմանների մոտ ամերիկյան տվյալ հածանավի հայտնվելը փաստաթղթում գնահատվում է որպես ՌԴ անվտանգությանն սպառնացող վտանգ:**

**Ռուսաստանը քանիցս մտահոգություն է արտահայտել Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության ամերիկյան համակարգի տեղաբաշխման առնչությամբ: Մոսկվայում գտնում են, որ համակարգը կարող է ուղղվել իր դեմ:**

**2011-ի մայիսին ՌԴ փոխարտգործնախարար Սերգեյ Ռյաբկովը ԱՄՆ-ին սպառնացել էր, որ Ռուսաստանը կարող է միակողմանիորեն դուրս գալ ՌՀՍ-3 պայմանագրից, եթե ԱՄՆ-ը շարունակի Եվրոպայում հակահրթիռային համակարգի տարրերի տեղաբաշխումը:**

# Ինչպիսի՞ն կլինի Գորիսը 2016-ին

## *Նպատակը՝ քաղաքը դարձնել տարվա բոլոր եղանակների զբոսաշրջային կենտրոն*



Հայաստանի կառավարությունը մի քանի օր առաջ որոշեց զբոսաշրջային կենտրոն հայտարարել Գորիս քաղաքը: Սա տրամաբանական տեսք է համարել՝ նկատի ունենալով Հայաստանի հարավային ուղղությամբ զբոսաշրջությունը զարգացնելու կառավարության մտադրությունը: Գորիսին առնչվող որոշումից հետո շատերի եւ հատկապես այդ տարածաշրջանի բնակիչների մեջ հետաքրքրություն առաջացավ, թե ինչի՞ հիման վրա է որոշվել այս քաղաքը դարձնել զբոսաշրջային կենտրոն, ի՞նչ է դա նշանակում, ինչպե՞ս է դա տեղի ունենալու եւ ի՞նչ ժամկետներում:

Գորիսը՝ իր բնակլիմայական պայմաններով, պատմամշակութային, ազգագրական առանձնահատկությունների ու ավանդույթների, զարգացող ենթակառուցվածքների շնորհիվ կարող է դառնալ զբոսաշրջային կենտրոն: Ընդ որում, այստեղ կարող են զարգանալ զբոսաշրջության մի քանի տեսակներ:

Աշխարհագրական դիրքն ու առանձնահատուկ բնությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում էկոլոգիական եւ արկածային զբոսաշրջության զարգացման համար: Հուշարձանների մշակութային բնույթը, գեղարվեստական արժեքը, առանձին հուշարձանների եւ հուշարձանախմբերի՝ ժամանակակից պահանջների համար օգտագործելու հնարավորությունները, հնարավոր են դարձնում Գորիսում զարգացնել մշակութային զբոսաշրջությունը: Այս առումով նախատեսվում է քաղաքի պատմական կենտրոնում ստեղծել «Հին Գորիս» պատմամշակութային արգելոցը: Բավական է նշել միայն Գորիսի արժեքավոր հուշարձաններից հին Գորիսը՝ իր վաղ շրջանի ամրոցով, ժայռափոր բնակելի եւ հասարակական համալիրներով, «քերծերով», «Քրատկներով», եկեղեցին, դպրոցը, տպարանը, «Պասսաժի» խանութները, հյուրանոցը, լիմոնադի գործարանը, բաղնիքը, Միրումյանների, Յոլյանների ու Բադիրյանների առանձնատները:

Գորիսը, գտնվելով Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը, Հայաստանն ու Իրանը միմյանց կապող միջպետական ճանապարհների վրա, հնարավորություններ ունի վերածվելու նաեւ տարանցիկ եւ լեռնային զբոսաշրջային գոտու՝ իր բնական հանգստի գոտիներով:

Կառավարությունը ցանկանում է մինչեւ 2016 թվականը Գորիսը դարձնել տարվա չորս եղանակի զբոսաշրջային կենտրոն: Մասնավորապես քաղաքը դարձնել մշակութային զբոսաշրջության կենտրոն, համահայկական, ինչպես նաեւ միջազգային մանկապատանեկան եւ երիտասարդական ճամբարատեղի, էկոլոգիական զբոսաշրջության կենտրոն, այլընտրանքային եւ արկածային զբոսաշրջության կենտրոն:

Մշակութային զբոսաշրջության համար նախատեսվում է ընդգրկել Գորիսի մոտ գտնվող գյուղերը՝ Տաթեւը, Խնձորեսկը, Հալիձորը, Քարահունջը, որտեղ ավելի լավ են պահպանված Գորիսի շրջանին բնորոշ ավանդույթները, կենցաղը, բարբառը, խոհանոցը եւ այլն: Այդ գյուղերի բնակիչները կներկայացնեն այդ ամենը, կսովորեն սպասարկման, զբոսաշրջիկներին իրենց օջախներում հյուրընկալելու որոշակի մոտեցումներ, կզբաղվեն տարածքի ինքնատիպությունը ցույց տվող հուշանվերային առեւտրով:

Վերոնշյալ նպատակների իրագործման համար կառավարությունը սահմանել է Գորիս քաղաքի զարգացման գերակա խնդիրները: Առաջիկա 5 տարվա ընթացքում նախատեսվում է ձեւավորել եւ զարգացնել քաղաքի ենթակառուցվածքները տեղի առանձնահատկություններին, ավանդույթներին, պատմամշակութային ժառանգությանը եւ միջազգային չափանիշներին համապատասխան, ստեղծել հուշարձանների արգելոց, Ժայռափոր Գորիսի տարածքում տուրիստական հանգրվան, բարելավել քաղաքի տրանսպորտային համակարգն ու ճանապարհները, վերագործարկել Գորիսի օդանավակայանը, ձեւավորել մասնագիտացված թաղամասեր, փողոցներ, անցկացնել երաժշտական, գործագործական եւ այլ մշակութային մրցութային փառատոներ, բարձրացնելով քաղաքի վարկանիշը եւ խթանելով մասնավոր ներդրումները այստեղ:

Այս ամենի արդյունքում ակնկալվում է, որ կավելանա Գորիս այցելող զբոսաշրջիկների թիվը, այստեղ կստեղծվեն նոր աշխատատեղեր, կաճեն զբոսաշրջությունից ստացվող եկամուտները:

Նպատակներն, անշուշտ, վատը չեն, իրականացման ուղիներն էլ իրատեսական են թվում: Մնում է ամենագլխավորը՝ դրանք իրականացնել, դարձնելով Գորիսը զբոսաշրջիկների համար հյուրընկալ տարվա բոլոր եղանակներին:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Լառնակայում բացվեց ՀԲԸՄ-ի Մշակութային կենտրոնը






Մայիսի 5-ին ձեռամբ Կիպրոսի Հանրապետության նախագահ Դեմետրիս Խրիստոֆիասի բացվել է Լառնակայում ՀԲԸՄ-ի մշակութային կենտրոնը, որը ծառայելու է ընդհանրապես հայ ժողովրդի եւ մասնավորապես կիպրահայ համայնքի պատմությունն ու էթնիկական ժառանգությունը պատշաճորեն ներկայացնելուն, տեղեկացնում է այդ առթիվ խմբագրությանը հասցեագրված հաղորդագրությունը:

Կենտրոնում նաեւ կազմակերպվելու են սեմինարներ, համագումարներ, աշխատանքային, գործնական, ինչպես նաեւ երաժշտական միջոցառումներ: Գործելու է նաեւ գրադարանը:

Կենտրոնի բացմանը ներկա են եղել նաեւ Լառնակայի 2 նախկին քաղաքապետները, ներկայիս քաղաքապետ՝ Անդրեաս Մոյսեոսը, քաղաքապետարանի խորհրդասուներն ու աշխատակիցները, Ներկայացուցիչների պալատի եւ կուսակցական խմբակցությունների անդամներ եւ Լառնակայի, Լիմասոլի եւ Նիկոսիայի հայ համայնքների ներկայացուցիչները: Նույն առիթով Դամասկոսից Կիպրոս էր ժամանել նաեւ ՀԲԸՄ կենտրոնական վարչության անդամ Վազգեն Յագուբյանը, որն իր երախտագիտական խոսքերն է հղել երկրի նախագահին՝ կենտրոնի բացմանը ներկա գտնվելու համար:

ՀԲԸՄ-ի Լառնակայի մասնաճյուղի անունից Ռուբեն Գալայճյանն իր հերթին շնորհակալություն է հայտնել նախագահին՝ հայկական համայնքին ցուցաբերած երկարամյա աջակցության համար:

**Հ. Ծ.**

# Մայրենին՝ դիվանագիտական զենք

## *Ժամանակակից հայ դիվանագիտության պատմությունից*

**...Մինսկում ընթանում էր բարձր մակարդակի նիստ, որը պետք է ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդին հանձներ նախապատրաստել Համագործակցության բարեփոխումների վերաբերյալ առաջարկությունների վերջնական տարբերակը:**

**Օրակարգի գրեթե յուրաքանչյուր կետի շուրջը (իսկ դրանք մի քանի տասնյակ էին) Ուկրաինայի պատվիրակությունը մասնակիցներին ներքաշում էր հյուծիչ բանավեճի մեջ: Նիստերի եզրափակիչ օրն էր, զգացնել էր տալիս համընդհանուր հոգնածությունը: Վերջապես, հասան օրակարգի վերջին՝ ռուսերենի՝ իբրեւ ԱՊՀ աշխատանքային լեզվի հարցին: Թվում էր, գոնե այդ կետի շուրջը տարաձայնություններ չեն լինի, եւ փաստաթղթի վերջնական տարբերակը, վերջապես, կընդունվի: Սակայն, ո՞ւր էր այդպես լիներ:**

**Ուկրաինայի պատվիրակության ղեկավար, այդ երկրի արտգործնախարարի տեղակալ Վլադիմիր Օգրիզկոն պահանջեց, ռուսերենի հետ մեկտեղ նշել ուկրաիներենը: Եվ հարցը նորից սկսեց քննարկվել:**

**Սակայն երբ պատվիրակությունների ղեկավարների ելույթների շարքում ձայն վերցրեց Հայաստանի փոխարտգործնախարար Գեղամ Ղարիբջանյանը (այժմ նա վարում է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը), ԱՊՀ պալատի կամարների ներքո հնչեց... հայերեն խոսքը: Դահլիճում գտնվողները զարմացած, հայացքը սեւեռեցին հայ դիվանագետի վրա, չհասկանալով ինչ է կատարվում...**

**- Պետք էր տեսնել ներկաների դեմքերը,- պատմում է Սանկտ Պետերբուրգում ՀՀ գլխավոր հյուպատոս Վարդան Հակոբյանը, որն այն ժամանակ գլխավորում էր հանրապետության ԱԳՆ ԱՊՀ վարչությունը: -Պատվիրակությունների ղեկավարները սկսեցին տարակուսած նայել միմյանց: ԱՊՀ գործկոմի նախագահ, գործադիր քարտուղար Վլադիմիր Ռուշայլոն նյարդայնացած միացնումանջատում էր խոսափողի կոճակը, իսկ ուկրաինացի պատվիրակը շշմած աչքերը հառել էր Ղարիբջանյանին: Ճիշտ է, թվում է՝ հենց Օգրիզկոն առաջինը գլխի ընկավ, թե իր դեմարշով ինչ էր ուզում ասել հայ դիվանագետը**

**Երբ վերջիվերջո բոլորը հասկացան Հայաստանի ներկայացուցչի ծանրակշիռ փաստարկը, դահլիճում համերաշխ ծափահարություններ թնդացին: Հարցը միահամուռ ընդունվեց:**

**ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ**
**Սանկտ Պետերբուրգ-Երեւան**

# Վրաց եկեղեցու նկրտումները Հայաստանում

*1-ին էջից*

**Բացի այն, որ կոմյունիկեն ներկայացնում է բացարձակ անորոշ ու անհասկանալի հեռանկար վրաց եկեղեցու հավակնությունները Հայաստանում իրագործելու առնչությամբ, ակնհայտ է, որ հիշյալ տեքստը վկայում է նաեւ այն բոլոր պնդումների սնանկությունը, թե հարեւան երկրների նաեւ հոգեւոր ոլորտներում խնդիրներ չկան: Ոչ միայն այդպիսի խնդիրներ կան, այլեւ դրանք այնպիսի լրջությամբ են ընդլայնվել ու խորացել, որ, առաջին հայացքից, Հայոց եկեղեցու համար անընդունելի այսպիսի մի գրություն է շրջանառվում:**

**Հասկանալի է, որ դժվար է գուշակել այն պայմաններն ու ներկայացված տեքստից դուրս ձեռք բերված պայմանավորվածությունները, որ կարող են լինել հայ եւ վրաց եկեղեցիների հոգեւոր առաջնորդների միջեւ, սակայն առնվազն տարօրինակ է, որ այսպիսի մի պահի շրջանառվում է մի տեքստ, որով վրաց եկեղեցին նույն երկրի սեփական՝ հայ քաղաքացիների պահանջը բավարարելու համար որպես պայման է առաջ քաշում վրաց եկեղեցու մուտքը մի տարածք, որտեղ անգամ ուղղափառության հետեւորդներ չկան:**

**Ավելին, հարց է բարձրացվում «բացելու հայ ու վրաց եկեղեցիները» համապատասխանաբար Վրաստանում եւ Հայաստանում, եւ դա այն դեպքում, երբ վրացական եկեղեցիների գոյությունը Հայաստանում որեւէ կերպ չի հաստատվում, իսկ հայկական եկեղեցիները շարունակում են ցցուն վկա լինել դրանց նկատմամբ վրացական տգեղ մոտեցման: Վստահաբար, բնավ էլ բարեհնչողության համար կամ էլ պատահականությամբ չէ, որ ընտրվել է «բացել» բառը, որի մեկնաբանություններում վրացական կողմը կարող է ամենայն հանգստությամբ «տեղավորել» ուղղակի նոր եկեղեցիների կառուցումը՝ զուգահեռելով դա քաղկեդոնական շրջանի եկեղեցիների նկատմամբ վերջին տարիներին կիսաձայն, բայց հաստատուն հնչեցվող նկրտումների հետ:**

**Ու եթե հաշվի առնենք, թե վրաց եկեղեցու ջատագովներն ու ջերմեռանդ հետեւորդներն ինչպես արագորեն հայտնվեցին Ջավախքում՝ անընդհատ մեծացնելով իրենց ներկայության թվային դրսեւորումները, մտնելով հայկական եկեղեցիներ, փորձելով վրացական ծեսով վրացականացնել դրանք, այնքան էլ ապահով չէ հեռանկարը, երբ վրաց քույր եկեղեցու առաջնորդ հովվապետական գավազանը ձեռքին իր քարոզն ու աղոթքը կկարդա որեւէ հայկական եկեղեցում Լոռու մի հատվածում, որտեղից կհաջորդվի կարգավիճակ ունեցող հարեւան հոգեւոր կառույցին սկսելու իր «թեմի վերականգնումը»:**

**Բոլոր դեպքերում, այսօր եւ վաղը սպասելով ողջ ճշմարտության երեւան գալուն, տեղեկացնենք, որ Ամենայն հայոց կաթողիկոսը երեկ այցելեց, միշտ վրաց պատրիարք-կաթողիկոսի ուղեկցությամբ, Ախալցխե: Վաղը սպասվում է Գարեգին Բ կաթողիկոսի հովվապետական այցը Ախալքալաք:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

## Անցուդարձ

# Վերնիսաժը չի՛ բարեկարգվել, մի քիչ կանաչապատվել է

*Տարածքի տեսքը շարունակում է զզվանք հարուցել*





Երբ երկու ամիս առաջ Երեւանի քաղաքապետն այցելեց Վերնիսաժ՝ ծանոթանալու տեղի խնդիրներին՝ սանիտարահիգիենիկ վիճակն ու այգու անմխիթար տեսքն արժանացավ նրա դժգոհությանը: Ավելին, Կարեն Կարապետյանը չթաքցրեց, որ Վերնիսաժ այցելելով զզվանքը եկել է: Որպեսզի մնացած քաղաքացիներն էլ զզվանք չզգային, քաղաքապետը հատուկ հանձնարարական տվեց եւ ժամկետ նշանակվեց, որ տարածքի վարձակալը՝ Հարություն Նավասարդյանը Վերնիսաժը բարեկարգի:

Կարապետյանի խոսքերով՝ Վերնիսաժում չպետք է լինեին «կապույտ նավեսներ», կանաչ տարածքում չպետք է առեւտուր իրականացվեր:

Հանձնարարականից մեկ շաբաթ անց, երբ քաղաքապետն այցելեց Վերնիսաժ, Հարություն Նավասարդյանը հայտարարեց, որ տարածքի բարեկարգումից տեղի վարձը՝ «200-300 դրամ, չի ավելանա»:

Մինչդեռ կիրակի օրը՝ մեր այցելության ժամանակ, Վերնիսաժի աշխատողներն ասացին, որ մեկ սեղանը վարձակալելու համար իրենցից այժմ պահանջում են 500 դրամ: Եթե տարածքը մեծ է, համապատասխանաբար գումարն էլ է մեծ:

Քաղաքապետի հանձնարարականը՝ հետեւել սանիտարահիգիենիկ վիճակին, զուգարան կառուցել եւ այլն, այդպես էլ մնացել է հանձնարարական: Տիկին Սեդան, որ հնաբնակներից է, պատմում է, որ սանիտարահիգիենիկ ոչ մի պայման ապահոված չէ:

«Գնում ենք դիմացի ֆիլհարմոնիկի շենքը կամ Ֆիրդուսի տնավաճառն ու 50 դրամ վճարելով օգտվում զուգարանից: Դե խոսացել են, որ պետք է զուգարան կառուցեն, բայց մինչեւ հիմա ոչինչ չկա», ասում է նա:

Հանձնարարականներ տալու ժամանակ քաղաքապետը պահանջել էր, որ քաղաքի դեմքը համարվող, զբոսաշրջիկների սիրելի վայրը բարեկարգվեր եւ կանաչապատվեր: Իրականում, Վերնիսաժում էական փոփոխություններ չեն կատարվել:

Կանաչ տարածքներում առեւտուրն արգելված է, սակայն կանաչ գոտիները չեն խնամվում: Տնկվել են եղեւնիներ, որոնք չեն խնամվում: Այգու տեսքը նախկինի պես անխնամ է, միայն նստարաններ են ավելացել: Աշխատողներն էլ փաստում են, որ գարնանը ծառերը չեն էտվել, ավելին, այգին այն տեսքն ուներ, որ դժվար էր ասել, թե վերջին անգամ երբ է ոռոգվել:

Աշխատակիցները փաստում են, որ հովանոցները տեղադրվել են իրենց հաշվին: Միջին չափսերի հովանոցներն արժեն 30.000 դրամ. տարածքի վարձակալը հրաժարվել է դրանք տեղադրել իր գրպանից:

«Բա ի՞նչ արեցինք, դիմեցինք: Վարձակալն ասաց, չեք ուզում՝ մի եկեք: Շատերը կան, որ երազում են ձեր տեղը գան նստեն: Մենք չգիտենք, մեզ չեն ասել, էդ զոնտիկները պետք է մե՞նք դնենք, թե՞ վարձակալը», ասում է աշխատակից Կարենը:

«Սա կուլտուրական ցեղասպանություն է», կյանքից է դժգոհում մեկ այլ աշխատակից Էդգարը՝ հավելելով, որ առեւտուրը շատ վատ է, հաճախ պատահում է, որ գալիս ենք ու աշխատած գումարը տալիս տրանսպորտին կամ վարձակալությանը:

Արծաթագործ Տիգրանն էլ իր դժգոհությունն ունի քաղաքապետին:

«Առաջ Վերնիսաժի աշխատակիցներին իրավունք էր տրվում աշխատանքային օրերին Վերնիսաժի սկզբում՝ Խանջյան փողոցի մոտ, առեւտուր անել: Դե մենք էլ գալիս էինք, մի օր ստացվում էր, մի օր չէր ստացվում: Նոր քաղաքապետը եկավ ու իր օրենքները հաստատեց: Հիմա Վերնիսաժում կարելի է առեւտուր անել միայն շաբաթ-կիրակի օրերին: Ամբողջ աշխարհում ամեն ինչ անում են, որ աշխատատեղեր բացեն, մենք, պարզվում է, էնքան լավ ենք ապրում, որ աշխատատեղերը կրճատվում են», ասում է Տիգրանը:

Երբ քաղաքապետն ասաց, որ Վերնիսաժը պետք է բարեկարգվի եւ կանաչապատվի, երեւանցիները կարծեցին, որ բարեկարգում ասելով քաղաքապետարանում նկատի ունեն առաջին հերթին սալիկապատել տարածքի քառուքանդ եղած անցումներն ու ճեմուղիները եւ լուծում գտնել շատրվանների աշխատեցնելու համար: Ցավոք, բարեկարգման մասին քաղաքացիների ու քաղաքապետարանի, մանավանդ վարձակալի պատկերացումները չեն համընկնում, որովհետեւ Վերնիսաժի տեսքն այսօր առանձնապես փոփոխություն չի կրել:

Կիսաքանդ շատրվանը, որը չի գործում եւ երեկոյան ժամերին բոմժերի ու թափառական շների ապաստարան է, հատկապես ամռան տոթ ամիսներին չափազանց կարեւոր է տարածքին զովություն պարգեւելու համար:

Եթե շատրվանները հնարավոր չէ աշխատեցնել, ապա ամենագրագետ լուծումը կլինի՝ քանդել եւ տարածքը կանաչապատել:

Մի՞թե քաղաքապետարանում չեն նկատել, որ Վերնիսաժի տարածքն այնքան խորդուբորդ է, որ հաճախ քաղաքացիները նախընտրում են փողոցով կամ դիմացի մայթով քայլել:

Վերնիսաժը քաղաքի հենց սրտում է՝ Հանրապետության հրապարակի, Ազգային պատկերասրահի եւ կառավարության շենքի հարեւանությամբ, հետեւաբար դա պետք է առավել զգաստացնի տարածքի վարձակալին բարեխղճորեն կատարելու իր աշխատանքը, իսկ քաղաքապետարանին՝ հետեւողական լինելու, որ տարածքը բարեկարգվի:

Առավել սարսափելի է տարածքի տեսքը երեկոյան ժամերին: Վերնիսաժը վերածվում է մութ ու ամայի մի վայրի, որը չի լուսավորվում, իսկ տարածքի հարեւանությամբ տեղակայված աղբանոցում գոյության կռիվ են տալիս տեղի բոմժերն ու թափառական շները:

Եթե այսօր էլ քաղաքապետն այցելեր Վերնիսաժ, կրկին զզվանք կզգար, ինչպես զգում են հարյուրավոր քաղաքացիներ ամեն օր:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

---

**Ի ՀՈՒՇ**

## Նշվեց Անդրանիկ Մարգարյանի ծննդյան 60-ամյակը



**Հունիսի 12-ին լրացավ Հայաստանի կառավարության ամենաերկարակյաց վարչապետ Անդրանիկ Մարգարյանի ծննդյան 60-ամյակը: Մեծ էր այցելուների թիվը Կոմիտասի անվան պանթեոն: Սիրված ընկերոջ, կուսակցի, վարչապետի շիրիմին էին այցելել մեր երկրի ղեկավար Սերժ Սարգսյանը, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, վարչապետ Տիգրան Սարգսյանը, պատգամավորներ եւ այլք: Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանը հոգեւոր դասի հետ հոգեգալստյան կարգ մատուցեց ու խնկարկեց Անդրանիկ Մարգարյանի հիշատակը:**

**Կեսօրին, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տոնեցին ազգային, պետական գործիչ, երջանկահիշատակ Անդրանիկ Մարգարյանի ծննդյան 60-ամյակը:**

**Բեմի կենտրոնում էկրանից հանդիսականներին էր նայում Անդրանիկ Մարգարյանի նկարը: Իսկ հաղորդավարը ժամանակ առ ժամանակ ընթերցում էր նրա պատգամները: Ցուցադրվում էին Մարգարյանի կյանքին ու գործունեությանը նվիրված կադրեր, որոնք ընդմիջվում էին հայ երգիչների հայրենասիրական երգերի կատարումներով: Մշեցու թոռ, հայրենասեր ու ընկերասեր Անդրանիկ Մարգարյանն իր կյանքի ընթացքում մշտապես փորձել է իր նախնիների պատգամներով շարժվել ու իր երիտասարդ տարիները նվիրել է հանուն ազատ, անկախ Հայաստանի գոյության պայքարին:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

---

# Ուժեղ ընկերության հովանու ներքո՝ արդեն վեց ամիս

Վեց ամիս առաջ Հայաստանում ներմուծվեց ավտոմեքենաների պետական պարտադիր ապահովագրությունը՝ ԱՊՊԱ-ն: Շուկա մտան մի շարք ընկերություններ՝ որոնցից «Ռոսգոսստրախ Արմենիա»-ն կարճ ժամանակահատվածում սկսեց առաջատար դիրքեր զբաղեցնել քաղաքացիներին վճարվող ապահովագրական հատուցումների գծով: Այսօր Հայաստանի ԱՊՊԱ-ի շուկայում «Ռոսգոսստրախ Արմենիա» ընկերության չափաբաժինը կազմում է ընդհանուրի շուրջ 36 տոկոսը: Ընկերության հաճախորդները մոտ 140 հազար են: Միայն ԱՊՊԱ-ի մասով ընկերության կենտրոնում աշխատում են 100-ից ավելի աշխատողներ, մոտ 730 գործակալներ՝ միջինը 200 հազար դրամ ամսական աշխատավարձով:

Հունիսի 11-12-ը «Ռոսգոսստրախ Արմենիա» ընկերությունը Ծաղկաձորում կազմակերպել էր սեմինար, որտեղ ներկայացվեցին անցած վեց ամիսների ընթացքում ԱՊՊԱ-ի շուկայում ընկերության իրականացրած գործողությունները: Մասնավորապես, համաձայն հայտերի կարգավորման կենտրոնի տրամադրած տվյալների, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքի գործողության սկզբից ճանապարհատրանսպորտային պատահարներից տուժած քաղաքացիներին «Ռոսգոսստրախ Արմենիա» ընկերությունն արդեն վճարել է ավելի քան 1 միլիարդ դրամ: Անցած 5 ամիսների ընթացքում ընկերության շուրջօրյա կոնտակտ կենտրոնը (31-10-10 հեռախոսահամարով) սպասարկել է 21200 զանգ, որոնց միջին ամսական քանակը կազմել է 4240, եւ այս ցուցանիշը ցուցադրում է կայուն աճ: Հիշյալ ժամանակահատվածում ԱՊՊԱ-ի գծով հայտային դիմումների ընդհանուր քանակը կազմել է 3040: Ընկերության գործադիր տնօրեն **Գարիկ Գրիգորյանը** զանգերի եւ դիմումների այս զգալի տարբերությունը հիմնավորում է հանգամանքով, որ մեկ դիմումատուն՝ կոնկրետ իր պատահարի հետ կապված կարող է իրականացնել մի քանի զանգեր, եւ ամեն զանգ չէ, որ հետագայում դիմումի հիմք է դառնում: «Ռոսգոսստրախ Արմենիա» ընկերության հաճախորդների մասնակցությամբ անցած հինգ ամիսների ընթացքում գրանցվել է 5000 ապահովագրական պատահար, Երեւանում տեղի ունեցած պատահարների թիվը 2,6 անգամ գերազանցում է մարզերի համանման գումարային ցուցանիշին: Սա չի կարող նշանակել, որ մարզերի վարորդները շատ ավելի քիչ են ՃՏՊ-ի մասնակից, օրինակ, չկան հստակ թվեր, թե Երեւանում տեղի ունեցած պատահարներից քանի տոկոսի մասնակիցներն են մարզերի վարորդները: Օրական տեղի ունեցող ՃՏՊ-ների առավելագույն միջին ցուցանիշն արձանագրվել է փետրվար ամսին՝ 37 (թերեւս պայմանավորված առատ ձյունով): Սակայն գարնանային ամիսներին այս ցուցանիշը նվազել է խիստ աննշան (32-ից 33), իսկ հունիսի առաջին կեսին նույնիսկ գրանցվել է աճ՝ 36:

Ինչպես վերը նշեցինք, անցած հինգ ամիսների ընթացքում «Ռոսգոսստրախ Արմենիան»-ն ՃՏՊ-ների մասնակից իր հաճախորդներից ստացել է 3040 դիմում: Դրանցից 2670-ը արդեն կարգավորված է, 351-ը գտնվում է դիտարկման փուլում, իսկ մերժվել է 19, որը ներկայացված հայտային դիմումների ընդհանուր թվի 0,7 տոկոսից պակաս է: Մերժման հիմնական պատճառներն են՝ միեւնույն սեփականատիրոջը պատկանող մեքենաների բախումը, միեւնույն ընտանիքի անդամներին պատկանող ավտոմեքենաների բախումը, օբյեկտին բախումը, այսինքն՝ երրորդ անձի բացակայությունը: Միջին վճարման հատուցումը կազմել է 200 հազար դրամ, գույքային վնասի գծով վճարված առավելագույն ապահովագրական հատուցման գումարը կազմել է 1,5 միլիոն դրամ: 58 դեպքերում հատուցումը գերազանցել է 1 միլիոն դրամը:

Այս տվյալները ներկայացնելով՝ «Ռոսգոսստրախ Արմենիա» ընկերության գործադիր տնօրեն Գարիկ Գրիգորյանը ընդգծեց, որ իրենք ընդհանուր առմամբ գոհ են արդյունքներից. «Շատ կարճ ժամանակահատվածում մենք Հայաստանում հասանք նման թվերի, ինչը, մեր կարծիքով, վատ չէ», ասաց Գրիգորյանը՝ շեշտելով, որ Արեւելյան Եվրոպայի եւ ԱՊՀ երկրների համեմատությամբ հայաստանյան ԱՊՊԱ շուկայի ցուցանիշներն ու ձեռք բերված արդյունքները բավական հատկանշական են:

Ապահովագրման վճարները չտրամադրելու, պատահարի վայր ապահովագրական ընկերության աշխատակցի ուշ տեղ հասնելու հետ կապված, ինչը հաճախ ճանապարհներին երկար խցանումների պատճառ է դառնում, Գրիգորյանը, ընդգծելով, որ «իրենք եւս բացթողումներ եւ թերացումներ ունեն», նշեց. «Հաճախորդների դժգոհությունները հիմնականում պայմանավորված են նրանով, որ դիմումատուն չի իմացել, որ իր ապահովագրությունը չի ծածկում տվյալ պատահարը»: Աշխատակիցների՝ դեպքի վայր ուշացած հասնելու կապակցությամբ, «Ռոսգոսստրախ Արմենիա»-ի գործադիր տնօրենը նկատեց, որ դա ունի, «նաեւ սուբյեկտիվ պատճառներ», որոնք իրենք ամեն կերպ փորձում են հաղթահարել, ինչպես նաեւ օբյեկտիվ պատճառներ. «Երբեմն պատահարների վայր հասնելը դառնում է անհնարին: Եղել են դեպքեր, երբ մեր աշխատակիցը իր մեքենան կանգնեցրել է դեպքի վայրից մի քանի կիլոմետր հեռու, քանի որ անհնար է եղել հասնել պատահարի վայրը: Առատ ձյան ժամանակ, երբ պատահարները բազմաթիվ են, մենք ֆիզիկապես էլ, հաշվի առնելով աշխատակիցների քանակը, ի վիճակի չենք ժամանակին հասնելու բոլոր ՃՏՊ-ների վայրերը»: Այդուհանդերձ, Գրիգորյանի խոսքերով, իրենց աշխատողները դեպքի վայր են հասնում 15-20 րոպեում:

Վերջում «Ռոսգոսստրախ Արմենիա»-ի գործադիր տնօրենը, ընդգծելով, որ «իրենք մրցակից են համարում շուկայի բոլոր մասնակիցներին», տեղեկացրեց, որ շուտով իրենց ընկերությունը կներկայացվի նաեւ Հայաստանի սահմանային մաքսակետերում:

Հ. Ա.
Ծաղկաձոր-Երեւան

**Հ. Գ.- Ի դեպ, Գրիգորյանի խոսքերով, նոր հաճախորդներ գրավելու համար իրենք որեւէ վարչական ռեսուրս չեն բանեցնում. «Եթե մենք վատ ապահովագրական ընկերություն լինեինք, այսքան հաճախորդներ չէինք ունենա», նկատեց Գրիգորյանը: Իսկ հայաստանյան պետական կառույցներից միայն արտակարգ իրավիճակների նախարարության մեքենաներն են, որ ապահովագրված են «Ռոսգոսստրախ Արմենիա» ընկերությունում:**

# Անցյալի հիշողություններից դեպի կիբեռ-տարածություն

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

«Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հրատարակման 80-ամյակը լրանալու է 2012 թվին: Բայց Թեքեյան մշակութային միության Նյու Յորք-Նյու Ջերսիի մասնաճյուղը, միանալով թերթի բարեկամների խմբին, այս տարվա հունիսի 4-ին Թինեքի (Նյու Ջերսի) «Մարիոթ» հյուրանոցում բացումը կատարեց հանդիսությունների շարքի, կազմակերպելով մի հոյակապ հանդիսություն, որին ներկա գտնվեցին դիվանագետներ, բարձրաստիճան հոգեւորականներ, կազմակերպությունների ներկայացուցիչներ, մտավորականներ, համայնքային առաջնորդներ եւ բարերարներ:

Երեկոն հագեցած էր կարոտախտով: Հիշվեցին եւ պատշաճ հարգանքի արժանացան թերթի նախկին խմբագիրներն ու գլխավոր աջակիցները՝ դոկտ. Մովսես Հովսեփյանը, Արմինե Դիքիճյանը եւ Ջեկ Անդրեասյանը, որոնք համայնքի սյուներն էին եւ «Միրորի» պատմության անքակտելի մասն էին դարձել: Ճաշակով պատրաստված մի գրքույկում ներկայացված էին նախկին եւ ներկա խմբագիրները, եւ տպավորությունն այն էր, որ նրանք բոլորը կարծես ներկա էին այդ հանդիսությանը, որը հրաշալի առիթ էր անդրադառնալու թերթի հրատարակության պատմությանը եւ նրա նշանակությանն ու դերին՝ ձեւավորելու համայնքային մեր կյանքն այս օտար ափերում:

Գրքույկում իր պատշաճ տեղն էր գրավում Վահան Թեքեյանի մի բանաստեղծությունը, որը լավագույնս ներկայացնում էր, գուցե, թերթի հիմնադիրների երկմտությունն ու մտահոգությունները՝ իրենց նոր նախաձեռնության նախաշեմին: Շրջադարձային իրավիճակ էր, որովհետեւ նրանք լեզուն պետք է անջատեին առաքելությունից: Մինչ այդ պահը հայերը նման կացության առաջ կանգնած չէին եղել, լեզուն միշտ ծառայել էր որպես միջոց՝ իրականացնելու համար առաքելությունը:

Երկմտանքի պատճառը հետեւյալն էր. հրաժարվել կա՛մ առաքելությունից, կա՛մ լեզվից: Բայց առաքելությունից հրաժարվելը ինքնաբերաբար առաջացնելու էր նաեւ լեզվի անկումը, լեզվից հրաժարվելը:

Մեծանուն բանաստեղծը նախատեսել էր եւ ողբում էր այդ անկումը, երբ գրում էր. **«Լեզուն, որով գրեցի՝ երկրի երեսը քիչեր կը կարդային զայն արդէն ու պակսեցան անոնք ալ... Հարիւր տարի վերջ միայն, իր այս ձեւով, այս սխալ կամ ճիշտ ձեւով ու հնչմամբ՝ լեզուն անուշ, զոր խոսեր էին անուշ տղաքներ, գուցե խոսող չունենա»:**

Դժբախտաբար բանաստեղծի կանխագուշակումը իրականություն է դառնում սփյուռքում: Ափսոս է, անկասկած, կորցնել այդ գեղեցիկ լեզուն: Սակայն մխիթարական է, որ լեզվի խոչընդոտը հաղթահարելով՝ մենք կարողանում ենք մեր նախնիների առաքելությունն ու ոգին փոխանցել մեր հետագա սերունդներին: Եվ դա էր 1932-ին թերթի հրատարակությունը նախաձեռնողների նպատակը: Ականատես լինելով նոր սերնդի օտարացման գործընթացին եւ անշուշտ տագնապելով լեզվի շարունակական կորստյան խնդիրներով, նրանք քաջ գիտակցեցին, որ ժառանգության փոխանցումը մեկ սերնդից մյուսին կարող է անընդհատական բնույթ կրել Միացյալ Նահանգներում առաջին անգլիալեզու հայկական թերթի հրատարակմամբ: Նրանք փորձեցին ողբերգությունը հաղթանակի վերածել:

Իմ անձնական համագործակցությունը «Միրորի» հետ սկսվեց 1966-ին, 45 տարի առաջ, եւ խմբագիրների ու գլխավոր աջակիցների հետ իմ հանդիպումներում պարզեցի, որ վերջիններս այդ նույն հիմնախնդիրների վերամարմնավորողներն էին, որոնք միեւնույն նվիրվածությամբ, եռանդով ու տեսլականով շարունակում էին թերթի սրբազան առաքելությունը:

Հայ ժողովրդի ճակատագիրը հետաքրքրական շրջադարձերով լի է: Հայկական լրագրությանը վիճակված էր ծնունդ առնել ու ծաղկել հայրենիքից հեռու, բայց հանուն հայրենիքի: Առաջին հայկական թերթը՝ «Ազդարարը», հրատարակվեց 1794-ին Մադրասում (Հնդկաստան), հայր Հարություն Շմավոնյանի խմբագրությամբ: Հայրենասեր մտավորականների խումբն ու խմբագիրը մի երազանք ու ձգտում ունեին՝ տեսնել Հայաստանն ազատ ու անկախ: Նրանք նույնիսկ տարօրինակ ծրագրեր ունեին օսմանյան սուլթանից գնելու մեր պատմական Հայաստանը, շատ նման Թեոդոր Հերցլի՝ հալածված հրեաների համար հայրենիք ստեղծելու ծրագրին:



«Արմինյն միրոր սփեքթեյթրն» էլ Հայաստանից հեռու, Բոստոնում (Մասաչուսեթս) հիմնադրվեց ու հրատարակվեց շատ ավելի համեստ՝ հայերին իրար կապելու, մի քաղաքը կամ մի երկիրը մյուսին կամրջելու ձգտումներով ու նպատակներով:

Մեր այս արագորեն փոփոխվող աշխարհում եւ գլոբալիզացիայի դարում որոշ մարդիկ գտնում են, որ տպագիր թերթի՝ լրատվամիջոցի դարն արդեն անցել է, եւ էլեկտրոնայինն է գլխապտույտ արագությամբ եկել փոխարինելու: Բայց հակառակ «Բորդերզ» գրախանութների ցանցի սնանկացմանը, տպագիր մամուլը դեռեւս կշարունակի մեզ ուղեկցել գոնե կանխատեսելի ապագայում, եւ «Միրորն» անկասկած իր դերակատարությունը կունենա այնտեղ: Նա պատրաստ է 80 տարվա իր փորձն ու ժառանգությունը փոխանցել այդ ապագային, միաժամանակ հաղորդակից լինելով, անշուշտ, էլեկտրոնային լրատվության առաջընթաց քայլերին:

Սկզբնական շրջանում «Միրորի» բաժանորդագրությունների կեսը Նյու Յորք-Նյու Ջերսի շրջաններում էր կենտրոնացած: 80-ամյակի այս հանդիսությունը հավանաբար կծառայի նաեւ, որ թերթը վերադառնա այս շուկան: Համացանցի եւ կիբեռ-տարածության օգտագործման միջոցով «Միրորը» կկարողանա հասնել իր ընթերցողներին, որտեղ էլ նրանք գտնվեն:

Մենք չենք թերագնահատում մյուս հրատարակությունների ներդրումներն ու ձեռքբերումները: Մրցակցելիս մենք իրարից շատ բան ենք սովորում եւ չմոռանանք, որ բոլորիս էլ վիճակված է առաջ մղել միեւնույն առաքելությունը՝ հանուն համայն հայության:

Տարածված է այն կարծիքը, որ քաղաքական մի խմբակցության հովանավորությամբ հրատարակվող թերթերը հակված են ներկուսակցական սահմաններում մնալու եւ փակ լինելու ազատ գաղափարների հոսքի առաջ: Իր նպատակասլաց քաղաքականության շնորհիվ «Միրորը» միշտ ձգտել է ցրել նման թյուր կարծիքը՝ ազատ ամբիոն դառնալով մտքերի ազատ փոխանակումների եւ ժողովրդական զգացմունքների անկաշկանդ արձագանքների համար: Իր պատմության ընթացքում թերթը միշտ պահպանել է իր կապը ժողովրդի, հասարակայնության հետ:

Եթե հայր Հարություն Շմավոնյանը ողջ լիներ այսօր, անկասկած կօրհներ «Միրորի» ռիսկոտ նախաձեռնությունը:

80-ամյակի հանդիսությունների սկզբնավորմամբ, թերթն անցյալի հիշողությունների շավիղից անցում է կատարում դեպի կիբեռ-տարածություն, դեպի նոր նախաձեռնություններ եւ ապագա նվաճումներ:

Թարգմ. Հ. Ծ.
Դետրոյթ

# «Ղարաբաղի հիմնախնդիրը. ազատության եւ անկախության փշե ճանապարհը»

*Նիկոլայ Հովհաննիսյանի աշխատությունը լույս է տեսել նաեւ իտալերեն*

***Վերջերս Իտալիայում իտալերեն լեզվով լույս է տեսել պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի գիրքը: Սույն աշխատության մեջ քննարկվում են ղարաբաղյան հիմնախնդրի ծագման քաղաքական, իրավական ու բարոյական պատճառները: «Ղարաբաղի հիմնախնդիրը. ազատության եւ անկախության փշե ճանապարհը» կոչվող իտալերեն այս գիրքը նաեւ անդրադառնում է հիմնախնդրի ընթացքին ու պայքարի փուլերին, որոնց միջով անցել է Լեռնային Ղարաբաղը:***

Հրատարակված աշխատության ու այլ հարցերի շուրջը **«Ազգ»** օրաթերթը զրուցեց հեղինակի հետ: Նիկոլայ Հովհաննիսյանը Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ է, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, պատմաբան ու միջազգայնագետ:

**-Պարո՛ն Հովհաննիսյան, մինչ Իտալիայում հրատարակված գրքին անդրադառնալը փոքր-ինչ ներկայացրեք՝ ավելի շատ ո՞ր թեմաներն ու խնդիրներն են զետեղված Ձեր ուսումնասիրությունների դաշտում:**

-Արաբական երկրները, Մերձավոր Արեւելքի խնդիրները, Հայոց ցեղասպանությունն ու էթնոքաղաքական կոնֆլիկտներին կապված հարցերն են հիմնականում ընդգրկված իմ ուսումնասիրությունների ու հետաքրքրությունների դաշտում: Օրինակ՝ աշխարհի ամենահին կոնֆլիկտը արաբա-հրեական կամ հրեա-պաղեստինյան կոնֆլիկտն է, դրա ուսումնասիրմամբ զբաղվում եմ ավելի քան 40 տարի, եւ իմ բոլոր աշխատություններում անդրադառնում եմ հրեա-պաղեստինյան կոնֆլիկտին: Երբ ծագեց ղարաբաղյան կոնֆլիկտը, թե՛ հայաստանյան, թե՛ միջազգային քննարկումների ժամանակ հաճախ դիմում էին ինձ, որպեսզի զուգահեռներ անցկացնեի հրեա-պաղեստինյան ու հայ-ադրբեջանական կոնֆլիկտների միջեւ:

**-Իսկ այս հարցերի վերաբերյալ արդեն տպագրված ի՞նչ աշխատություններ ունեք:**

-Դրանց նվիրված 5 մենագրություն ունեմ, որոնք հրատարակվել են ռուսերեն ու անգլերեն: Նույնիսկ մենագրություններից մեկը, որը կոլեկտիվ մենագրություն է, Միացյալ Նահանգներում հրատարակել է Մերիլենդի համալսարանը:

**-Իսկ ե՞րբ եւ ո՞ւմ նախաձեռնությամբ է իտալերեն հրատարակվել «Ղարաբաղի հիմնախնդիրը. ազատության եւ անկախության փշե ճանապարհը» կոչվող Ձեր աշխատությունը:**

-Գիրքն իտալերեն լեզվով հրատարակվել է այս տարվա մայիսին: Իտալերեն հրատարակելու նախաձեռնությունն Իտալիայում Հայաստանի դեսպանությանն է՝ հանձին դեսպան Ռուբեն Կարապետյանի: Դեսպանի նախաձեռնությունն Իտալիայի արտաքին գործերի նախարարության միջազգային դիվանագիտական ակադեմիայի կողմից դրական արձագանք գտավ, եւ աշխատության իտալերեն թարգմանության ու հրատարակության ծախսերն իրենց վրա վերցրին իտալահայերը:

**-Ուրիշ ի՞նչ լեզուներով է լույս տեսել սույն աշխատությունը:**

-Գրքի անդրանիկ հրատարակությունը եղել է դեռ 1997 թվականին ռուսերեն լեզվով, ապա տպագրվել է անգլերեն, որոշ հատվածներ լույս են




տեսել նաեւ իտալերեն ու արաբերեն: Եվ ահա 1-2 շաբաթ առաջ էլ հրատարակվեց իտալերեն:

**-Ո՞վ է կատարել իտալերեն թարգմանությունը:**

-Գիրքն անգլերենից իտալերեն է թարգմանել գրող Արսլանի դուստրը՝ Չեչիլիա Վերոնեզեն, իսկ Անտոնիո Արսլանը խմբագրել է իտալերեն տեքստը:

**-Պարո՛ն Հովհաննիսյան, արդյոք խոսքը իտալահայ մեծանուն գրող Անտոնիա Արսլանի մասի՞ն է, որը Հայաստանում առավել հայտնի դարձավ «Արտույտների ագարակը» ֆիլմի ցուցադրությունից հետո, այն ֆիլմի, որը ներկայացնում է Հայոց ցեղասպանության ողբերգական փաստերը:**

-Այո՛, մենք խոսում ենք նույն Անտոնիա Արսլանի մասին: Հենց նրա հուշապատումի հիման վրա իտալացի հայտնի կինոռեժիսորներ Տավիանի եղբայրները նկարահանեցին «Արտույտների ագարակը» ֆիլմը:

**-Որտե՞ղ տեղի ունեցավ գրքի շնորհանդեսը:**

-Գրքի քննարկումն ու շնորհանդեսն արդեն կազմակերպվեցին Հռոմում, որտեղ մայիսի 25-ին Իտալիայի արտաքին գործերի նախարարության միջազգային դիվանագիտական ակադեմիայում ներկայացվեց գիրքը:

**-Ինչքանով տեղյակ եմ, այդ ակադեմիան մեծ հեղինակություն վայելող հաստատություն է, որի դռներն ամեն հեղինակի ու գրքի առաջ բաց չեն անում:**

-Այո՛, դիվանագիտական այդ ակադեմիայում գրքի քննարկումն իսկապես կարեւոր իրողություն համարվեց: Ակադեմիայի դահլիճը լեփ-լեցուն էր: Իտալիայում Հայաստանի դեսպան Ռուբեն Կարապետյանն իր ելույթում նշեց, որ այս գիրքն Իտալիայում իտալերեն հրատարակված գիտական առաջին լուրջ աշխատությունն է Ղարաբաղի վերաբերյալ, ու դրա իտալերեն հրատարակումը պատահականություն չէ. իտալացիներին, իսկապես, հարկավոր էր ներկայացնել գիտական լուրջ ուսումնասիրություն: Դեսպանը նաեւ նշեց, որ գրքի հրատարակումը առիթ է, որ իտալացի հանրությունը եւս մեկ անգամ իր ուշադրությունը սեւեռի Ղարաբաղի հիմնախնդրի վրա: Ի դեպ, իտալերեն հրատարակության ներածությունը գրել է Ռուբեն Կարապետյանը:

**-Շնորհանդեսի ընթացքում ուրիշ ի՞նչ ելույթներ եղան:**

-Ելույթ ունեցան իտալացի հայտնի պրոֆեսորներ Պոլիտին, Բայսն ու Ալիպո Հանդին: Պրոֆեսոր Պոլիտին, որն ակադեմիայի ղեկավարներից է, նշեց, որ աշխատությունը մեծապես կօգնի իտալացի հանրությանը՝ ստանալու ավելի ճշգրիտ ու գիտականորեն հիմնավորված տեղեկություն ղարաբաղյան հիմնախնդրի առաջացման պատճառների ու բնույթի վերաբերյալ: Իսկ պրոֆեսոր Բայսը, որը եղել է Հայաստանում ու աշխատել Մատենադարանում, ակադեմիայում հայտարարեց, որ Ղարաբաղը մշտապես կազմել է Հայաստանի մաս, ու նրա բնակչությունը հիմնականում եղել են քրիստոնյա հայերը:

**-Ինչպիսի՞ն էին ներկաների արձագանքները:**

-Շատ արձագանքներ եղան, ու բազմաթիվ հարցեր հնչեցին: Ներկաներին հատկապես հետաքրքրում էին ղարաբաղյան հիմնախնդրի բնույթը, առաջացման պատճառներն ու լուծման հնարավոր ուղիները: Քննարկմանը ներկա էր շուրջ 160 հոգի, որոնց բոլորին գրքից մեկական օրինակ բաժանվեց:

**-Որտե՞ղ եւ ինչպե՞ս կարելի է ձեռք բերել Ձեր աշխատությունը**

-Գիրքն իտալերեն լույս է տեսել 2500 օրինակով եւ հիմնականում իրացվելու է Իտալիայում, որտեղ, ինչպես գիտենք, իտալացիներից զատ կան մեծաթիվ օտարերկրացիներ: Այսինքն՝ ուզում ենք, որ միջազգային հանրությունը նույնպես ծանոթանա գրքին ու նրանում քննարկվող հարցերին:

**-Ո՞վ է հովանավորել աշխատության հրատարակումը:**

-Գրքի հրատարակման ֆինանսական ծախսերը հիմնականում հոգացել են Իտալիայում բնակվող պարսկահայ Սարո Խուդավերդին ու Իտալիայի հայ միությունը ՝ հանձին նախագահ Սվազլյանի:

Հարցազրույցը վարեց
ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

# Ո՞վ կդառնա ԵԱՀԿ գլխավոր քարտուղար, կամ Հայաստան-Կիպրոս պայմանավորվածությունները կյանքի են կոչվում

ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի պաշտոնում միակ թեկնածուն Կոսովոյում ՄԱԿ-ի առաքելության ղեկավար, իտալացի դիվանագետ Լամբերտո Զանիերն է: Վերջինիս թեկնածությունը հաստատման է ներկայացվել Լիտվայի առաքելության կողմից: Առաջիկա 10 օրերի ընթացքում կգործի այսպես կոչված «լռության ընթացակարգը». եթե ԵԱՀԿ անդամ-երկրներից որեւէ մեկը դեմ չարտահայտվի թեկնածությանը, ապա կհամարվի, որ կոնսենսուսի սկզբունքը պահպանված է, եւ նշանակումը կկայանա: 2005թ.-ից ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի պաշտոնը զբաղեցնում է ֆրանսիացի դիվանագետ Մարկ Պերրեն դը Բրիշամբոն:

ԵԱՀԿ գլխավոր քարտուղարը նշանակվում է երեք տարի ժամկետով, նրա լիազորությունները կարող են երկարացվել եւս մեկ ժամկետով: ԵԱՀԿ գլխավոր քարտուղարը պարտավոր է հետեւել կառույցում ընդունված որոշումների իրականացմանը, աջակցել մշտական խորհրդին, որի առջեւ եւ հաշվետու է, խրախուսել անդամ-երկրների միջեւ երկխոսությունն ու բանակցությունները, կազմակերպել եւ կոորդինացնել ԵԱՀԿ դաշտային առաքելությունների գործունեությունը: Նա կարող է որոշում ընդունող մարմինների ուշադրությանը ներկայացնել իր իրավասության շրջանակում գտնվող ամեն մի հարց եւ հանդես է գալիս՝ որպես գործող նախագահի ներկայացուցիչ:

ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի պաշտոնին, բացի իտալացի Լամբերտո Զանիերից, հավակնում էին նաեւ ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախկին նախագահ Ժոաու Սոարեշը, Ավստրիայի նախկին արտգործնախարար Ուրսուլա Պլասնիկը, Բրազիլիայում Թուրքիայի դեսպան Էրսին Էրչինը: Մինչ այժմ ամենահավանական թեկնածուն համարվում էր Ավստրիայի նախկին արտգործնախարարը, սակայն կիրակի Թուրքիան հայտարարել էր, թե պատրաստվում է արգելափակել Պլասնիկի նշանակումը, ինչից հետո վերջինիս թեկնածությունը հանվեց: Անկարայի այս ֆայլն արդեն դժգոհություն է առաջացրել Վիեննայում, եւ Ավստրիայի արտգործնախարար Մ. Շպինդելեգերի խոսքով, կարող է հանգեցնել երկու երկրների միջեւ հարաբերությունների սառեցման: Նշենք, որ դեռեւս Ավստրիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի պաշտոնում Ուրսուլա Պլասնիկն աչքի էր ընկել Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության հարցում՝ ոչ այնքան «հուսադրող» հայտարարություններով: Նա, մասնավորապես, առաջարկել էր ԵՄ հետ համագործակցության «բավականին սերտ մակարդակ», ցանկալի անդամակցության փոխարեն:

Ինչպես նշվեց, ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի պաշտոնում իր թեկնածուն էր առաջարկել նաեւ Անկարան: Էրսին Էրչինի թեկնածությունը, սակայն, արգելափակվել էր Հայաստանի եւ Կիպրոսի Հանրապետության կողմից: Թե ինչով կարող էր հղի լինել միջազգային այս կառույցի կոորդինացումը թուրք պաշտոնյայի կողմից, մեզ հուշում է ԵԽԽՎ նախագահի պաշտոնում թուրք պատգամավոր Մովլութ Չավուշօղլուի նշանակման փորձը: Դեպքերի համանման զարգացումը ԵԱՀԿ-ում փաստորեն հնարավոր դարձավ կանխել կառույցում հայ-կիպրական համատեղ ջանքերի շնորհիվ:

Թերեւս Կիպրոսի Հանրապետության հետ մեր ընդհանրությունները բավականաչափ են. գլխավոր նմանությունը Թուրքիայի քաղաքականությունն է երկու պետությունների նկատմամբ: Թերեւս պատահական չէ, որ ԵՄ խորհրդարանի կողմից Թուրքիայի առնչությամբ ընդունված գրեթե բոլոր բանաձեւերում միաժամանակ ընդգծվում է Կիպրոսի համար թուրքական նավահանգիստներն ու օդանավակայանները բացելու եւ Հայաստանի շրջափակումը դադարեցնելու պահանջը: Ուստի եւ Կիպրոսի հետ համագործակցության անհրաժեշտությունը վաղուց էր ծնվել: Սակայն միջազգային ասպարեզում կղզի-պետության հետ գործողությունների կոորդինացումը հնարավոր դարձավ այս տարվա հունվարին երկու երկրների նախագահների միջեւ հայ-կիպրական համատեղ հռչակագրի ստորագրումից հետո, որում մասնավորապես ընդգծվում է ՄԱԿ-ում եւ միջազգային այլ կառույցներում քաղաքական կապերն ու համագործակցությունն ակտիվացնելու անհրաժեշտությունը:

Մյուս կողմից՝ փաստաթղթում կողմերն ընդգծում են «միջազգային իրավունքի նորմերին համապատասխան եւ փոխադարձ հարգանքի ու փոխըմբռնման հիման վրա հարեւան պետությունների հետ առանց նախապայմանների, բնականոն հարաբերություններ հաստատելու եւ զարգացնելու անհրաժեշտությունը»: Թերեւս ակնհայտ է, թե խոսքն ում է վերաբերում. արեւելյան հարեւանի շրջափակում, հարավային հարեւանի հաղորդակցության ուղիների արգելափակում, եւ այս ամենը Եվրոմիության անդամության թեկնածու երկրի կողմից: Բրյուսելն Անկարայից հեռու է բավականաչափ, այս հանգամանքը թերեւս թույլ չի տալիս շատ երեւույթներ ժամանակին նկատել, մինչդեռ Նիկոսիան ԵՄ այն մայրաքաղաքներից է, որոնք Թուրքիայի ապակառուցողական քաղաքականության արդյունքները մինչեւ օրս զգում են սեփական մաշկի վրա: Միաժամանակ հայ-կիպրական բարեկամությունն այն խթանն է, որը կօգնի մշտապես եվրոպացիների հիշողության մեջ թարմ պահել Թուրքիայի ապակառուցողական ուղեգիծը նաեւ հայերիս նկատմամբ:

Երբեմն միջպետական տարբեր փաստաթղթերի կնքման մասին լուրերը շատերս ընկալում ենք որպես հերթական ձեւական քայլ: Հաճելի է, սակայն, որ հայ-կիպրական համաձայնագիրը փաստորեն չդարձավ դեկլարատիվ հերթական փաստաթուղթը:

Մ. ՍԵՄԵՐՋՅԱՆ

4 ԱՄՍՈՒՄ 2-ՐԴ ԱՆԳԱՄ

## Երկրաշարժ Նոր Զելանդիայում

**Հունիսի 13-ի առավոտյան Նոր Զելանդիայի երկրորդ քաղաք Քրայստչըրչում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ: Stuff.co.nz կայքի տվյալներով, արձանագրվել է երկու ստորգետնյա ցնցում: 5,5 մագնիտուդով առաջին ցնցման էպիկենտրոնը եղել է քաղաքից 10 կմ արեւելք, 11 կմ խորության մեջ: Այդ ցնցումից 1 ժամ 20 րոպե անց տեղի է ունեցել 6 մագնիտուդով ցնցում, որի էպիկենտրոնը եղել է քաղաքից 10 կմ հարավ-արեւելք, 9 կմ խորության մեջ:**

**Նախնական տվյալներով, կան ավերածություններ: Զոհերի վերաբերյալ տեղեկություններ չեն ստացվել: Տարբեր վնասվածքներով հիվանդանոց է տեղափոխվել 10 մարդ:**

**2011-ի փետրվարին դարձյալ Քրայստչըրչում տեղի ունեցած ուժեղ երկրաշարժի հետեւանքով ավերվել էին ամբողջ թաղամասեր, զոհվել էր 181 մարդ:**

## 18-ամյա ֆիլիպինցին աշխարհի ամենակարճահասակ մարդն է

**Ֆիլիպինների Մինդանաո կղզու 18-ամյա բնակիչ Ջունրի Բալուինգը ճանաչվել է աշխարհի ամենակարճահասակ մարդ: Նրա հասակը 55 սանտիմետր է: ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ կիրակի օրը (երբ լրացավ նրա 18 տարին) համապատասխան գրառում է կատարվել Գինեսի ռեկորդների գրքում:**

**Հարազատների խոսքերով, Ջունրիի հասակի աճը դադարել է 1 տարեկանից: Պատճառը չի բացահայտվել, սակայն հայտնի է, որ տղան շատ է հիվանդացել: Չնայած թույլ առողջությանը, պատանին ներկայումս հաճույքով կատարում է տնային աշխատանքներ՝ օգնելով ծնողներին:**

**Անցյալում ռեկորդը պատկանում էր նեպալցի Հագենդրա Տապա Մագարոսին, որի 18 տարին լրացավ 2010-ի հոկտեմբերին: Նրա հասակը 66 սանտիմետր է:**

## Լիբիացի ապստամբները զենք են ստանում Թունիսից



**Լիբիայի արեւմուտքում գործող ապստամբները մաքսանենգ ճանապարհով զենք են ստանում Թունիսից: Այդ մասին հայտնի է դարձել BBC գործակալությանը: Լիբիացի մի մաքսանենգ, իր անունը չհրապարակելու պայմանով, BBC-ի թղթակցին պատմել է, որ իրեն եւ իր աջակիցներին հաջողվում է Թունիսից լիբիական տարածք տեղափոխել նռնականետների եւ Կալաշնիկովի ավտոմատների փոքր խմբաքանակներ:**

**Մուամմար Քադդաֆիին հավատարիմ մնացած զորքերը Թունիսի սահմանից հեռու չեն, եւ ապստամբների դեմ նրանց ռազմական գործողություններից երբեմն տուժում է նաեւ Թունիսի տարածքը:**

**Թունիսի ժամանակավոր կառավարությունը վախենում է բացահայտորեն պաշտպանել լիբիացի ապստամբներին: Թունիսցի սահմանապահներին հրահանգված է մանրակրկիտ խուզարկել դեպի Լիբիա շարժվող բոլոր ավտոմեքենաները:**

**Հիշյալ լիբիացի մաքսանենգի խոսքերով, Թունիսի սահմանով Լիբիա անցկացվող հրազենի գնումները ֆինանսավորում են աշխարհի լիբիական սփյուռքի ներկայացուցիչները: Նրա պնդման համաձայն, թունիսցիներից շատերը, զուտ կարեկցանքից ելնելով, օգնում են ապստամբներին:**

**Լիբիայի արեւմուտքում ապստամբների հրամանատարներից մեկը՝ Աhբիլ Դոդին, BBC-ի թղթակցի հետ զրուցելիս ՆԱՏՕ-ի երկրներին կոչ է արել իր մարտիկներին ուղարկել ծանր սպառազինություն:**

# Ընտրություններում հաղթեց Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը

## *Նա ավելի շատ քվե ստացավ, քան մնացած 14 կուսակցությունները միասին*

Ինչպես ենթադրվում էր, հունիսի 12-ի Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի համընդհանուր ընտրություններում հաղթեց Ռեջեփ Թայիփ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը, ընդ որում ստանալով ավելի քան 50 մլն ընտրողներից 21 մլն 500 հազարի ձայնը: Այդ ընթացքում նախորդ ընտրությունների հետ համեմատ 5 մլն-ով ավելացավ կուսակցության օգտին քվեարկողների թիվը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը երկրում միանձնյա իշխանության էր եկել նաեւ 2002-ի եւ 2007-ի ընտրություններով, նրա երրորդ հաղթանակը, այսինքն երրորդ անգամ անընդմեջ իշխանության գալը, այն էլ ընտրողների թիվը ավելացնելով, բազմակուսակցական համակարգն անցնելուց հետո աննախադեպ է Թուրքիայի պատմության մեջ:

2007-ի նախորդ ընտրություններում ընտրողների ընդհանուր ձայների 46,7 տոկոսն ստացած «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը հունիսի 12-ին ստացավ 49,9 տոկոս: Ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը, որը 2007-ին ստացել էր ձայների 20,1 տոկոսը, այս ընտրություններում շուրջ 6 տոկոսով բարելավեց դրությունը, բարձրացնելով այդ ցուցանիշը 25,9 տոկոսի, իսկ «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպությունը՝ Ազգայնական կուսակցությունը, նախորդ ընտրություններում ստացած 14,3 տոկոսի փոխարեն այս անգամ ստացավ ձայների 13 տոկոսը:

Ինչ վերաբերում է քրդերի «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությանը, որն ընտրություններին մասնակցեց մեծամասնական ընտրակարգով միայն, նախորդ ցուցանիշի՝ 22-ի փոխարեն Մեջլիսում ստացավ պատգամավորական 35 տեղեր: Թուրքական մամուլը դա համարում է կուսակցության համար պատմական հաղթանակ: Հատկանշական է, որ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությունը դա ձեռք է բերել երկրի արեւելյան, հարավարեւելյան շրջաններում Էրդողանի կուսակցության նկատմամբ առավելության հասնելով, որտեղ նա վերջինից խլել է քվեների շուրջ 15-20 տոկոսը:

Չնայած նախորդ ընտրությունների համեմատ ընտրողների թվի զգալի ավելացմանը եւ տոկոսային հարաբերությամբ քվեների ցուցանիշի 3 տոկոսով բարելավմանը, «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը նոր Մեջլիսում նախորդ 341 պատգամավորի փոխարեն կունենա 326 պատգամավոր: Համապատասխանաբար Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը 112-ի փոխարեն՝ 135, իսկ Ազգայնական շարժում կուսակցությունը՝ 53, որն ունեցել է 71 պատգամավոր:

Ընտրողների թվի աճի պայմաններում «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության պատգամավորական տեղերի կրճատումը պայմանավորված է պատգամավորների ընտրության մասին ընտրական բարձրագույն խորհրդի ընտրությունների նախօրեին ընդունած որոշումով: Խնդիրը սոսկ պատգամավորների թվի կրճատումը չէ, այլ նոր սահմանադրությունը հանրաքվեի ներկայացնելու համար Մեջլիսում առնվազն 330 պատգամավորական տեղեր ունենալու անհրաժեշտությունը:

Այլ կերպ, եթե Մեջլիսում մյուս կուսակցությունները դեմ քվեարկեն նոր սահմանադրության ընդունմանը, ապա Էրդողանի կուսակցությունը կզրկվի դա հանրաքվեի դնելու իրավունքից: Մինչդեռ հենց այդ սահմանադրությունն էր համարվում հունիսի 12-ի ընտրությունների գլխավոր արդյունքը: Սա նշանակում է, որ նախքան հանրաքվեի դնելը Էրդողանի կուսակցությունը սահմանադրության տեքստը պետք է համաձայնեցնի սահմանադրության փոփոխությանը հրարամերժ պատճառաբանություններով ի սկզբանե հակադրվող Ժողովրդա-հանրապետական, Ազգայնական շարժում, ինչպես նաեւ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությունների հետ:

Հունիսի 12-ի ընտրություններում իսլամամետ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության հաղթանակը լայն արձագանք է գտել աշխարհում: Հաղթանակի առթիվ Էրդողանին շնորհավորել են ի դեմս Եվրոհանձնաժողովի եւ Եվրոխորհրդի նախագահների՝ Եվրոմիությունը, Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադը, Ղազախստանի վարչապետ Քարիմ Մասիմովն ու ուրիշներ: Այս հաղթանակին «Էրդողանը Թուրքիայում արդիականացման հաղթանակն է» վերնագրով անդրադարձել են ֆրանսիական «Ֆիգարոն», «Լիբերասիոնը», որոնց օրինակին հետեւել են Կոսովոյի, Հունաստանի, Իսպանիայի, Լիբանանի լրատվամիջոցները, ձայնակցելով աշխարհի այնպիսի առաջնակարգ լրատվամիջոցներին, ինչպիսիք են BBC-ն, CNN-ը, Ռոյթերը եւ այլն:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ԱԶԳ



ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

# «Փայտոն Ալեքը» Կոմեդիայի թատրոնի բեմում



Նրան ճանաչում էին բոլորը: Մտրակը ձեռքին ու կեպին գլխին, փայլեցրած սապոգները ոտքերին ու մեջքին՝ գոտին, որից Սարկիսով ժամացույցը կախ տված, կոկիկ, արեւածագից մինչեւ ուշ գիշեր իր ֆայտոնն էր քշում Ալեքը, որի ֆայտոնի երկու ձիերից մեկի ճակատին սպիտակ նշան կար, ոնց դաշտի շուշան...: Ահա այսպես է Խաչիկ Դաշտենցը ներկայացնում Ալեքին, իր «Փայտոն Ալեքը» պոեմում: Հակոբ Պարոնյանի անվ. երաժշտական կոմեդիայի պետ. թատրոնը (գեղղեկ՝ Երվանդ Ղազանչյան) թատրոնի խաղացանկում ընդգրկել է «Փայտոն Ալեքը» պոեմի հիման վրա Ռոբերտ Քոչարյանի հեղինակությամբ եւ բեմադրության ու նկարչական ձեւավորման հեղինակ Հակոբ Ղազանչյանի 1 գործողությամբ լիրիկական կատակերգությունը, որը նվիրվում է Խաչիկ Դաշտենցի ծննդյան 100-ամյակին:

Կիրակի օրը Պարոնյան թատրոնի հարկի տակ էին հավաքվել բազմաթիվ թատերասերներ Երեւանից, Գյումրիից ու նաեւ սփյուռքից: «Փայտոն Ալեքը» ներկայացման առաջնախաղից առաջ ներկաներին ողջունեց թատրոնի պրոֆ. **Երվանդ Ղազանչյանը** ու շեշտեց, որ թատրոնը հավատարիմ մնալով իր ավանդույթներին, բեմադրել է հայ հեղինակի գործ, քաջ գիտակցելով, որ առանց հայ ժամանակակից ու դասական դրամատուրգիայի, հայ թատրոն գոյություն ունենալ չի կարող: «Այս առաջնախաղը տարբերվում է մյուսներից, քանզի թատրոն է մտնում Շիրակի մթնոլորտը, մարդու մթնոլորտը: Այս հրաշալի ներկայացումը իրականացվեց ԱԺ փոխնախագահի Սամվել Բալասանյանի հովանավորության շնորհիվ: ԱԺ նախագահի Հովիկ Աբրահամյանը վերջերս հովանավորեց մեր թատրոնի հյուրախաղերը Լեհաստանում անցկացվող շեքսպիրյան փառատոնին»: Շնորհակալություն հայտնելով ղեկավար այրերին, որոնք մշտապես իրենց ուշադրության կենտրոնում են պահում հայ թատրոնն ու մշակույթը, պրն Ղազանչյանն ավելացրեց. «Այսօրվա թատրոնների վրա պետք է դողալ, դրանք հենց այնպես չեն ստեղծվել, դրանք պետք է պահել ու պահպանել եւ փոխանցել սերունդներին: Ավելի լավ է երկու կուսակցություն պակաս լինի, բայց այս գործող թատրոնները պահվեն»: (Հասկանալի չէ՝ կուսակցություններն ինչով են խանգարում թատրոնին.- խմբ.):

Վարագույրը բացվեց ու բեմը դարձավ մի կտոր Գյումրի իր առօրյայով, 20-րդ դարասկիզբը ներկայացնող պատկերներով, ֆայտոն Ալեքով, օրհնորդ Վարսենիկով, խելառ Սարգիսով, պոլոզ Մուկուչով եւ էլի գրոտեսկային այլ կերպարներով: Կոմեդիան հիացմունք պատճառեց ներկաներին կենդանի երաժշտության՝ Գյումրիի թատրոնի դերասան Հովհաննես Հովհաննիսյանի երգերի կենդանի կատարումներով: Ֆայտոն Ալեքի դերակատարը՝ ֆայտոնին հավատարիմ Սամվել Գրիգորյանը (Գյումրիից) նույնպես փայլեց իր հումորով: Իսկ ֆայտոն Ալեքի մենախոսությունը, խորխս պարն ու մտրակի հաճախակի զարկերը լրացնում էին նրա կերպարը, որը մտահոգ ու շատ մտազբաղ մտորում էր «Գյումրին փոխվել է, գյուղն եկել, լցվել է քաղաք, ինչքան չլուդ կա՝ դարձել է աղա, ֆայտոնը թողել, ավտո են նստում...»: Հենց այդ մտահոգությամբ էլ թախծում է՝ «ֆայտոնը մեռավ, Գյումրին կմեռնի.... ֆայտոնը շուտով մասով ցույց կտան....»:

Հետաքրքրական լուծում էր տվել բեմադրիչ Հակոբ Ղազանչյանը դարասկզբի «ժաժքի» տեսարանը որբորեն ներկայացնելով: Ներկայացման պարերը բեմադրել էր ՀՀ վաստ. արտիստ Գագիկ Կարապետյանը, իսկ երգերի մշակումը եւ գործիքավորումը՝ Արեգ Առուստամյանը: Գյումրվա համն ու հոտը, կոլորիտը, հումորն ու գրոտեսկը հրաշալի ներկայացնում էին գյումրեցի դերակատարներ՝ ՀՀ վաստ. արտիստներ Զավեն Աբրահամյանը, Սամվել Բաղինյանը եւ Վանիկ Մկրտչյանը: Չփլաղ Փիլոսին՝ Վարդան Կուլյանոսյանը, հավավաճառին՝ Մովսես Նիկողոսյանը, խելառ Սարգիսին՝ Արմեն Գասպարյանը, իսկ լազաթ ֆառֆուռի դերը յուրօրինակ ու հրաշալի մատուցեց ՀՀ վաստ. արտիստուհի Ջուլիետա Ստեփանյանը: Իսկ օրհնորդ Վարսենիկը՝ Տիգրանուհի Տեր-Մարկոսյանն իր խենթ ու խելառ կերպարով հմայեց:

Ներկայացումից հետո **«Ազգ»-ի** հետ զրույցում նշում էին **Հրանտ եւ Ժանետ Մարգարյանները** (Նյու-Յորք). «Դաշտենցի գործն այնքան խորքային է, որ կերպարների միջոցով, հատկապես ֆայտոն Ալեքի, մեզ է փոխանցում այդ ժամանակի գույնը եւ կոլորիտը: Այդքան հավասի ներկայացնել երկրաշարժը, ժողովրդի փախեփախը եւ կրկին վերադարձն ու ֆայտոն Ալեքի վախճանը: Պետք է շնորհավորենք բոլորին այս պատմական արժեք ունեցող գործը բեմադրելու համար»:

Շատ գոհ էր **Սամվել Բալասանյանը**: «Իմ հոգին լցվեց մի կտոր Գյումրիով: Ցանկանում եմ, որ այնտեղ ֆայտոնները կրկին աշխատեն, ու ֆայտոնչիները շարունակեն մեր ավանդույթները...»:

Շուրջ 34 տարի Գյումրիի շրջկոմի քարտուղար, հարգված ու սիրված գյումրեցի տիկին **Դոնարա Հարությունյանի** աչքերում արցունքի կաթիլներ երեւացին: Եվ ամեն տեսարան դիտելիս իր կողքին նստած Մուրադ Հասրաթյանի հետ «խորաթա» էին անում ու հիշում անցյալը, ուրախանում, որ դերասանները ճշտորեն ներկայացնում էին ու յուրովի գույներով լցնում այն օրերի իրադարձությունները: «Շնորհակալ ենք, որ այս ներկայացման միջոցով վերապրեցինք այն դառն ու դաժան ժամանակները, ասաց տկն. Դոնարան:

Եվ ինչպես այն ժամանակ, հիմա էլ Գյումրին հաղթահարեց ու մնաց իր մշակույթով ու կոլորիտով անկրկնելի: Գյումրին ինչքան էլ որ «վիրավոր» լինի, կրկին կհառնի փյունիկ թռչունի պես, եւ ոչ ոք չի կարող գյումրեցու կամքը կոտրել»: Գոհ էր բեմադրիչ **Հակոբ Ղազանչյանը**. «Այն ինչ ուզում էի՝ ստացվեց, բայց դեռ 10 ներկայացումից հետո, հանդիսատեսի հետ շփումից, նրա անմիջական արձագանքից ներկայացումը կդառնա լիակատար, քանզի թատրոնը կենդանի արվեստ է եւ դրանում կարեւորը հանդիսատեսի արձագանքն է»:

Այս ներկայացումը Գյումրիի համար կարեւոր խնդիր է: Առանց ֆայտոնի Գյումրին Գյումրի չէ...:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Թատերախաղը շարունակվում է կյանքում

*(Անահիս ԹՈՓՉՅԱՆ, «Անհետացում», վեպ, Երեւան, «Պապյրինս» հրատ. 2010թ. 264 էջ)*

Ժամանակակից գրական աշխարհի միապաղաղ ընթացքը հազվադեպ են ալեկոծում գրական բարձրարժեք երկերը, իսկ օրեր առաջ լույս տեսած **Անահիս Թոփչյանի** «Անհետացում» վեպը ոչ միայն թարմ հոսանքով ներխուժեց գրական աշխարհ, այլեւ փաստեց, որ բոլոր իրավունքներն ունի կրելու արդի հայ գրականության լավագույն վեպի դափնին:

Ընթերցելուց հետո ցանկություն առաջացավ գրելու վեպի մասին, սակայն ոչ որպես գրականագիտական վերլուծություն (քանզի գրականագիտորեն մանրակրկիտ վերլուծությունները, շեշտը դնելով լեզվի, կառուցվածքի, ոճի վրա, հաճախ համարժեք կերպով չեն ներկայացնում գրական երկն այնպես, ինչպես հեղինակն է զգացել եւ ապրել):

Վեպի էջերը մի ավելորդ անգամ վկայեցին, որ հեղինակն իր գրիչը թաթախել է բոլոր ժամանակների չչորացող, չցամաքող ազնվության մելանի մեջ, եւ քանի որ ազնիվ սրտով, ազնիվ մտքով եւ ազնիվ գրչով ստեղծված երկերն են կրում հավերժի կնիքը, ապա «Անհետացում» վեպը, գրողի ստեղծագործական տաղանդին զուգահեռ, կրում է նաեւ ավելի հազվագյուտ՝ բարոյական տաղանդի դրոշմը, այդ պատճառով իսկ կարծում ենք երբեք չի անհետանա հայ գրականության նվաճումների ցանկից:

Ո՞վ է հայտնի դերասանուհի Ա. Թ.-ն՝ նույնացած շվեյցարացի իրավապաշտպան Դոմինիկ Տեսիեի հետ - երկու արտաքին, սակայն մի ներքին ունեցող, «ինքն իր մեջ անհետացած, ինքն իր միջից վերածնված» մի կին, իր տաղանդը ժողովրդին ծառայեցրած մի անհատականություն, որի ապրած ողբերգությունը նաեւ քո՛նն է, նրան բեմից զրկելով առաջին հերթին քե՛զ են զրկել հոգեւոր սնունդից, քե՛զ են կողոպտել, արհամարհել՝ փոխարենն ամենուր հրամցնելով բեմի թերմացքը:

Վեպն ընթերցելիս ցավ ապրեցի, ափսոսանք, զայրույթ, զարմանք եւ... անափ հիացմունք. վեպի հերոսուհին բեմում, կյանքում, մարդկային փոխհարաբերություններում նույնպես հերոսուհի է. դիմակայել նախանձի, չարակամության, ժխտումի, վերջապես, ջնջումի տարերային հորձանքին. սա իսկապես հերոսություն է մեծատառով:

Եվ հայրենիքից հեռացած դերասանուհին, որը չէր կարող «այստեղ անկոչ հյուր լինել, այն էլ նրանց խղճուկ սեղաններին...», որպես Դոմինիկ Տեսիե, «խենթ, վտանգավոր եւ արկածախնդիր» այց է կատարում հայրենիք եւ այնտեղ ցավով պարզում, որ իր ֆիզիկական անհետացումից առաջ իրեն փորձել են անհետացնել բարոյապես՝ «նախանձի չարության եւ լկտի խաբեության» խառնուրդով:

Նա եկել էր իր հետքերը որոնելու, իր անցյալը փրկելու, սակայն գտնում է դատարկություն, անհետացում... «Ջնջել էին վաստակը, խեղաթյուրել»:

Հեղինակը նաեւ նրբին խաղ է արել՝ զուգորդելով անցյալն ու ներկան, ինչպես բեմում՝ վարագույրը վարագույրի ետեւից է բացում՝ տեսանելի դարձնելով ե՛ւ անցյալի այլանդակությունները, ե՛ւ ներկայի քաղաքական խաղերը:

Վեպի ամեն մի տողը ապրված հույզի, վիրավորանքի, ցավի խտացում է: Հեղինակն անկեղծ է իր բոլոր հոգեվիճակներում. սա ստեղծագործության ամենազորավոր հաղթաթուղթն է, եւ թերեւս սա է պատճառը, որ հերոսուհու տառապանքները ոչ թե խղճահարություն են առաջացնում, այլ հարգանք: Քանզի նա միշտ մնում է իր պատվանդանին: Վիրավորված, հիասթափված պահին էլ նա դարձյալ վեհ է, հպարտ, նա կի՛ն է բառի բոլոր իմաստներով, ինչո՞ւ ոչ, նաեւ մի փոքր կոկետ:

Դերասանուհին ինչո՞ւ հեռացավ հայրենիքից. որովհետեւ




«կյանքը դարձել էր աքսոր սեփական տանը», որովհետեւ դժվար է ապրել մի քաղաքում, ուր նախանձն անբաժան ստվերի պես հետեւում է արժեքավոր մարդուն եւ ամեն վայրկյան պատրաստ է հարվածել թիկունքից, որովհետեւ. «Ոչինչ չի կարող մեղմել արվեստագետի տագնապը, երբ զրկված է ստեղծագործելու հնարավորությունից, մանավանդ երբ առաքելություն ունի՝ կոչված է Աստծո կողմից: Առավել ծանր է, երբ տեսնում ես, որ դա արվում է կանխամտածված, չարամիտ մի ծրագրով...», որովհետեւ ամենուր իշխում է «խուժանի տրամաբանությունը, որը չի կարող հանդուրժել վսեմը, գեղեցիկը: Դեռ ոչինչ, որ խուժանը հասկում է, սոսկալի է՝ երբ «բարձրանում» է եւ հնարավորություն ստանում իրենից լավի ճակատագիրը որոշել»:

Հեռացավ, որովհետեւ լինելով ազնիվ անձնավորություն, «բարձրաձայնելով համընդհանուր կարծիքը, ասես ընդգծում էր, որ ինքն է միակ համարձակը, իսկ մյուս բոլորը վախկոտ են ու երկերեսանի...», որովհետեւ անվերջանալի էին մանր ու մեծ ինտրիգներն ու ստորությունները, որոնք հաղթահարում էր իր արվեստով. «Ես նրանց հանդեպ ոչ մի քեն չունեմ եւ վաղուց ներել եմ, նրանք ավելի շատ իրենց են վնասել. նախանձն ու չարությունը խանգարել են որեւէ լուրջ բան անելու արվեստում, այնինչ՝ կարող էին... Նույնիսկ շնորհակալ եմ իմ թշնամիներին, քանզի ստիպեցին ինձ անել ավելին, քան պատրաստվում էի»:

Եվ ո՞վ հասկացավ հայրենիքից հեռացող դերասանուհու այս տագնապները, ո՞վ իսկապես ընկալեց այդ ողբերգությունն իր ամբողջ խորությամբ:

«Գնացի մեղավորության մի ծանր զգացումով, ասես բժիշկ լինեի, որ անհույս հիվանդին լքում հեռանում է, մարտիկ, որ վճռական պահին լքում է դիրքերը, նավապետ, որ ալեկոծության մեջ ընկած նավը թողնում է անղեկ... Միաժամանակ փորձում էի արդարացում գտնել, որ եթե բժիշկ էի, ապա առանց դեղամիջոցների, եթե զինվոր՝ ապա անզեն, եթե նավապետ՝ ապա առանց նավի եւ առանց ծովի...»:

Իսկ վերադարձավ, քանի որ «Հայացքս շարունակ հայրենիքին էր, զգում էի, որ վերադարձի ժամը վաղուց է հնչել, որ չափից ավելի մնացի դրսում...»: Օդի պակասից խեղդվելով գնաց, կարոտին չդիմանալով վերադարձավ. «Հացի համար չէի գնացել: Եվ հացի համար չեմ եկել»: Վերադարձավ, քանի որ ուզում էր ճշտել իր եւ ամուսնու հարաբերությունները. «Ամեն ինչ խառնվել է, ե՛ւ քեն, ե՛ւ ատելություն, ե՛ւ սեր, ե՛ւ խղճի խայթ, ե՛ւ մեղավորության զգացում... Պետք է գնալ եւ տեղում պարզել»:

Վերջապես վերադարձավ, քանի որ մայր ուներ հայրենիքում, մի ազնիվ էակ: Անհնար է առանց խորին հուզմունքի կարդալ մոր եւ Դոմինիկ-դերասանուհու հանդիպումը, որը հերոսուհուն արգելել էին, զգուշանալով, որ մոր սրտին խաբելը դժվար է, եթե չասենք՝ անհնարին:

Գրքի ամենահաջողված դրվագներից է մոր եւ կերպարանափոխված դստեր հանդիպումը, որտեղ հերոսուհին, որպես օտար կին, իր մասին մոր բերանից լսում է բաներ, հիացական խոսքեր, որոնք երբեք, խստապահանջ եւ զուսպ ծնողը չէր ասել իր աղջկան, քանզի գտնում էր, որ «տանը գովածը կորած է»:

Առհասարակ, մոր, եղբոր եւ ամուսնու հետ հերոսուհու հանդիպումներն ու զրույցները վեպի ամենախոր, ամենահուզիչ եւ դրամատիկ դրվագներն են:

Գիրքը փակեցի մեղքի գիտակցությամբ, սեփական անզորության դեմ կռիվ տալով. ինչո՞ւ եմ լռում, ինչո՞ւ է կողքինս լռում, ինչո՞ւ են բոլորը լռում չէ՞ որ սա սպանություն է, անարյուն, սառնասիրտ սպանություն, տաղանդ են սպանում, անուն են սպանում, հոգի՜ են սպանում, հույս, երջանկություն են սպանում: Լռում ենք. ոմանք չհասկանալով, ոմանք անզորությունից, ոմանք վախից, շատերն էլ՝ նախանձից եւ չարակամությունից:

Գրքի շապիկին հեղինակը շնորհակալություն է հայտնում իր բարեկամներին եւ «հատկապես չարակամներին, որ ստիպեցին գրել այս վեպը»: Ես էլ եմ շնորհակալ, հատկապես չարակամներին. բեմից զրկեցին Անահիս Թոփչյան դերասանուհուն, փոխարենը մեզ պարգեւեցին Անահիս Թոփչյան արձակագրին: Տեղին է հիշել մեծն Վահրամ Փափազյանին. «Տաղանդավոր մարդը տաղանդավոր է ամեն ինչում: Ես համոզված եմ, որոշ՝ «սեփական թույնով սնվողներ», եթե գրելուց էլ զրկեն նրան (քավ լիցի, այս անգամ թույլ չենք տա, չասած՝ որ դա գործնականորեն անհնար է), տաղանդավոր արձակագիր-դերասանուհին ինքնարտահայտվելու մեկ այլ ելք կգտնի - բնությունն ինքն է տաղանդի պատվանդանը դրել նրա ոտքերի տակ, իսկ դափնին՝ ճակատին:

«Անհետացում» վեպն Անահիս Թոփչյանի փայլուն հաղթանակն է, արդարությա՛ն հաղթանակը:

ԳԱՅԱՆԵ ԱԹԱՆՅԱՆ

# Հայ-ֆրանսիական համագործակցություն ձիասպորտում



Կարճատեւ այցով Հայաստան է ժամանել Ֆրանսիայի կառավարության ձիերի հարցերով զբաղվող կազմակերպության ղեկավար Ժան Լենը, որին ուղեկցում է Եվրոպայում Հայաստանի ձիասպորտի ֆեդերացիայի ներկայացուցիչ Քրիստիան Զատիկյանը: Ժան Լենը հանդիպել է ձիասպորտի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Հայրապետ Հայրապետյանին, ծանոթացել մեր հանրապետությունում մարզաձեւի դրվածքին ու զարգացման հեռանկարներին:

«Արարատ» հյուրանոցում կազմակերպված ասուլիսում **Հայրապետ Հայրապետյանը** տեղեկացրեց, որ ֆրանսիացի մասնագետների հետ համագործակցության պայմանավորվածություն է ձեռք բերվել: Ֆրանսիացիները կօգնեն ավելի զարգացնելու ձիասպորտը Հայաստանում, համապատասխան կադրեր կպատրաստեն:

**Քրիստիան Զատիկյանը** նշեց, որ լավ ճանաչելով Ժան Լենին, ծանոթ լինելով նրա մասնագիտական կարողություններին ու հմտություններին, առաջարկել էր այցելել Հայաստան, տեղում ծանոթանալ ստեղծված պայմաններին ու հնարավորին չափով օգնել հայկական ձիասպորտին: Եվ Ժան Լենը սիրով ընդունեց առաջարկը:

**Ժան Լենը** նշեց, որ ցանկանում են ձիասպորտում ունեցած իրենց հսկայական փորձը փոխանցել հայերին, օգտակար լինել մարզաձեւը հանրապետությունում զարգացնելու ու նոր մակարդակի վրա դնելու հարցում: Նա զարմացած էր մնացել մեր ձիարշավարանում ստեղծված բարենպաստ պայմաններից: Միեւնույն ժամանակ ֆրանսիացին գտնում է, որ միջազգային չափանիշներին հասնելու համար հարկավոր է ավելացնել վազքուղիների թիվը, նաեւ բարելավել ձիերի խնամքի պայմանները: Ըստ Ժան Լենի, Ֆրանսիայում ձիասպորտը 70 հազար աշխատատեղ է ապահովում: Այն ե՛ւ սպորտ է, ե՛ւ ժամանցի հիանալի միջոց: Ֆրանսիան ձիասպորտի ասպարեզում համագործակցում է մի շարք երկրների հետ եւ այդ շարքում այսուհետ կլինի նաեւ Հայաստանը:

Ժան Լենը նշեց, որ համագործակցությունը ներառելու է 3 կարեւոր ուղղություններ: Առաջին հերթին պետք է բարելավել ձիերի գենետիկան, այսինքն ավելի շատ ազնվական ցեղերի ձիեր բերել Հայաստան՝ տեղում ցեղատեսակն ազնվացնելու նպատակով: Երկրորդը տեխնիկական օգնությունն է՝ մարզագույքի ձեռքբերում: Ոչ պակաս կարեւոր է նաեւ համագործակցության 3-րդ կետը, որը ենթադրում է մասնագետների վերապատրաստում եւ նոր կադրերի պատրաստում:

Ինչպես նշեց Հայրապետ Հայրապետյանը, շուտով Երեւանում կհիմնվի ձիասպորտի հատուկ դպրոց, որտեղ ֆրանսիացի մասնագետների օգնությամբ դասընթացներ կանցկացվեն, կպատրաստվեն որակյալ մասնագետներ: Ժան Լենն ու Հայրապետ Հայրապետյանը հույս հայտնեցին, որ ձիասպորտում հայ-ֆրանսիական համագործակցությունն օգտակար կլինի երկու կողմերի համար էլ ու իր դրական ազդեցությունը կունենա հանրապետությունում մարզաձեւի զարգացման գործում:

# «Գանձասարը» ստանձնեց առաջատարի դերը

## *Հավաքականում ելույթները բացասաբա՞ր են անդրադառնում փյունիկցիների վրա*



**Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 12-րդ տուրն անվանեց նոր առաջատարին: ՀՀ առաջնությունների պատմության մեջ առաջին անգամ մրցաշարային աղյուսակը գլխավորեց Կապանի «Գանձասարը»: Աբրահամ Խաշմանյանի գլխավորությամբ կապանցիներն ընթացիկ մրցաշրջանում բավական առաջադիմել են ու հաջող ելույթներ են ունենում: Տուրի կենտրոնական խաղում «Գանձասարը» Երեւանում հյուրընկալվել էր «Միկային»: Բավական ակտիվ ու հետաքրքրական պայքարում անցած մրցախաղում կապանցիները գոլային պահերով գերազանցեցին մրցակցին եւ ի վերջո հասան ցանկալի արդյունքի: Խաղի վերջին րոպեին Անդրանիկ Սարգսյանը մենմենակ դուրս գալով Գեւորգ Կասպարովի դեմ, նրա գլխավերեւով գնդակն ուղարկեց անպաշտպան դարպասը՝ չափազանց կարեւոր հաղթանակ պարգեւելով իր թիմին:**

**Մրցաշարի առաջատարներից 12-րդ տուրում հաջողության հասավ միայն «Գանձասարը»: Աղյուսակը գլխավորող «Ուլիսը» «Հրազդանում» չկարողացավ հաղթել առաջնության հետնապահ «Արարատին», որին առաջին շրջանում պարտության էր մատնել 3-0 հաշվով: Ճիշտ է, առաջինը հաջողության հասավ «Ուլիսը»: Դավիթ Գրիգորյանը տուգանային հարվածով բացեց հաշիվը: Մինչեւ ընդմիջում արարատցիները Գեւորգ Կարապետյանի ջանքերով վերականգնեցին հավասարակշռությունը: Արարատցիները եւս մեկ անգամ Արա Հակոբյանի հարվածից հետո գրավեցին դարպասը, սակայն մրցավարը չհաշվեց գոլը: Գրանցվեց ոչ-ոքի, որի պատճառով «Ուլիսը» զիջեց առաջատարի դիրքը:**

**Էլ ավելի անհաջող հանդես եկավ «Փյունիկը», որն Իջեւանում 0-2 հաշվով զիջեց «Շիրակին»: Արդեն 2-րդ դեպքն է, որ փյունիկցիները հավաքականի խաղից հետո առաջնության հերթական տուրում պարտվում են: Մարտին ռուսների հետ Երեւանում ոչ-ոքի խաղալուց հետո փյունիկցիները 0-1 հաշվով զիջել էին «Ուլիսին»: Այս անգամ էլ շիրակցիներ Անդրանիկ Բարիկյանի եւ Գեւորգ Հովհաննիսյանի խփած գոլերի շնորհիվ «Շիրակը» պարտության մատնեց չեմպիոնին: Եվ դեռ այսքանից հետո «Փյունիկի» ղեկավարությունը մտադիր է իր առաջատար ֆուտբոլիստներին ուղարկել արտերկիր՝ չմտածելով, որ շուտով մեկնարկի են դուրս գալու չեմպիոնների լիգայի մրցաշարում:**

**Առաջնությունում 2-րդ հաղթանակը տոնեց «Բանանցը»՝ 2-1 հաշվով առավելության հասնելով «Իմպուլսի» նկատմամբ: Հաղթանակն ապահովեցին Բրունո Կորեայի եւ Արտակ Դաշյանի խփած գոլերը, որոնց «Իմպուլսը» պատասխանեց Ռոման Հարկուշայի գոլով:**

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Գանձասար | 12 | 7 | 4 | 1 | 17-6 | 25 |
| 2. Ուլիս | 12 | 7 | 3 | 2 | 17-9 | 24 |
| 3. Փյունիկ | 12 | 6 | 3 | 3 | 20-14 | 21 |
| 4. Իմպուլս | 12 | 5 | 2 | 5 | 16-15 | 17 |
| 5. Միկա | 12 | 4 | 3 | 5 | 13-12 | 15 |
| 6. Շիրակ | 12 | 3 | 3 | 6 | 10-14 | 12 |
| 7. Բանանց | 12 | 2 | 5 | 5 | 14-19 | 11 |
| 8. Արարատ | 12 | 1 | 3 | 8 | 8-26 | 6 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Մարկոս Պիզելի | «Փյունիկ» | 6 |
| Էդգար Մանուչարյան | «Փյունիկ» | 5 |
| Բրունո Կորեա | «Բանանց» | 5 |

# Լավագույնն Անդրեասյանի արդյունքն է

**Վորոնեժում մեկնարկել է շախմատային փառատոնը, որի գլխավոր մրցաշարում հանդես են գալիս հայաստանցի 4 շախմատիստներ: Ընդ որում Զավեն Անդրեասյանը մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշն ունի (2640):**

**Մինչեւ հիմնական մրցաշարի մեկնարկը շախմատիստներն ուժերը չափեցին արագ շախմատի մրցախաղում: 11 տուրով անցկացված մրցաշարում հաղթող ճանաչվեց ռուսաստանցի Իգոր Լիսիյը, որը վաստակեց 7,5 միավոր: Նա պարգեւատրվեց 15 հազար ռուբլով: Հայաստանցի շախմատիստներից լավագույն արդյունքի հասավ Զավեն Անդրեասյանը, որը Ալեքսեյ Ալեքսանդրովի եւ ռուսաստանցի Արթուր Գաբրիելյանի հետ վաստակեց 7 միավոր: Լրացուցիչ գործակիցներով Զավենը զբաղեցրեց 4-րդ տեղը ու ստացավ 8 հազար ռուբլի: 6,5 միավորով 5-րդ տեղը զբաղեցրեց եւ 7 հազար ռուբլի դրամական պարգեւի արժանացավ Գեւորգ Հայրապետյանը:**

**Լիլիթ Գալոյանը վաստակեց 6 միավոր, ինչը լավագույն արդյունքն էր կանանց շրջանում: 2-րդ ցուցանիշը ցույց տվեց Նելլի Աղինյանը, որը վաստակեց 5,5 միավոր: Մեր երկու շախմատիստուհիներն էլ արժանացան հատուկ մրցանակների:**

**Հայ շախմատիստները հաջող մեկնարկեցին հիմնական մրցաշարում, որտեղ հանդես են գալիս 84 շախմատիստներ: Զավեն Անդրեասյանը մրցաշարը սկսեց հաղթանակով՝ առավելության հասնելով Օլեգ Վաստրուխինի նկատմամբ: Հաղթեց նաեւ Գեւորգ Հարությունյանը՝ պարտության մատնելով Յուրի Խալիկովին: Նելլի Աղինյանն ու Լիլիթ Գալոյանը հաշտություն կնքեցին համապատասխանաբար Միխայիլ Պանարինի եւ Գեորգի Սախվաձեի հետ:**

**Ռուսաստանը ներկայացնող հայազգի 3 շախմատիստներից հաղթեց միայն Արթուր Գաբրիելյանը՝ պարտության մատնելով Յուրի Գորշկովին: Էդուարդ Բարսամյանը հաշտություն կնքեց Վալերի Նեւերովի հետ, իսկ Գեւորգ Հայրապետյանը պարտվեց Ալեքսեյ Ձենզերային:**

ԸՄԲՇԱՄԱՐՏ

# Երեք մրցանակակիր

**Թբիլիսիում անցկացված ըմբշամարտի Գրան պրիի մրցաշարում հայ ըմբիշները 3 մեդալ նվաճեցին: Առավել հաջող էր ազատ ոճային ըմբիշ Դավիթ Սաֆարյանի ելույթը, որը մինչեւ 66 կգ քաշային կարգում հասավ մինչեւ եզրափակիչ ու արժանացավ արծաթե մեդալի: 2 բրոնզե մեդալ էլ մեր հավաքականին պարգեւեցին հունահռոմեական ոճի ըմբիշներ Ալեքսան Միքայելյանը (74 կգ) եւ Հարություն Հովհաննիսյանը (55 կգ):**

# Պատանի շաշկիստի մեծ հաջողությունը

**Ադլերում կայացած ռուսական շաշկու Եվրոպայի պատանեկան առաջնությունում հաջող հանդես եկավ 9-ամյա Ռուբեն Պետրոսյանը: Մասնակցելով մինչեւ 10 տարեկանների մրցաշարին, Ռուբենը 7 հնարավորից վաստակած 5 միավորով դարձավ արագ շաշկու Եվրոպայի փոխչեմպիոն: Նա մեկ միավորով հետ մնաց չեմպիոնի տիտղոսը նվաճած ռուսաստանցի Դանիլ Լեոնիդովից:**

**Նշենք, որ Հայաստանի ներկայացուցիչն առաջին անգամ էր մասնակցում ռուսական շաշկու Եվրոպայի առաջնությանը: Ռուբենը «Ուսում» հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի աշակերտ է, շաշկու ՀՀ բազմակի չեմպիոն Նշան Ալավերդյանի սանն է:**

# Մովսիսյան-Նավարա շախմատի մրցախաղ Պրահայում

**Պրահայում մեկնարկող շախմատային փառատոնի շրջանակներում Չեխիայի մայրաքաղաքում բնակվող Սերգեյ Մովսիսյանը յուրօրինակ մրցախաղ կանցկացնի այդ երկրի ուժեղագույն շախմատիստ Դավիթ Նավարայի հետ: Մրցակիցները նախ կանցկացնեն 6 պարտիայից բաղկացած դասական շախմատի մրցախաղ, ապա ուժերը կչափեն արագ շախմատի 4 պարտիաներում: Մրցամարտի պատվավոր հյուրերի թվում են աշխարհի ներկայիս չեմպիոն Վիշվանաթան Անանդը եւ աշխարհի նախկին չեմպիոն Անատոլի Կարպովը: Անանդը միաժամանակյա խաղաշար կանցկացնի, իսկ Կարպովը կմասնակցի իր անվան շախմատի դպրոցի բացման արարողությանը:**

**Դավիթ Նավարան 2004-ից սկսած ավանդաբար մրցախաղեր է անցկացնում ուժեղագույն գրոսմայստերների հետ: 2004-ին նա դասական շախմատի մրցախաղում 0,5-1,5 հաշվով զիջել է Ալեքսեյ Շիրովին, հաջորդ տարի ոչ-ոքի է խաղացել Անատոլի Կարպովի հետ (1-1): 2006-ին էլ Բորիս Գելֆանդի հետ մրցավեճն է ավարտել ոչ-ոքի (2-2): Հետագա տարիներին նա արդեն արագ շախմատի մրցախաղեր է անցկացրել Նայջել Շորթի (7-3), Վլադիմիր Կրամնիկի (2,5-5,5), Վասիլի Իվանչուկի (2,5-5,5) եւ Յուդիթ Պոլգարի (2-6) հետ:**

# Նարդիստները վիճարկեցին ՀՀ գավաթը

**Հայտնի դարձան նարդու կարճ խաղաձեւի հանրապետության գավաթակիրները: Մրցումներն անցկացվեցին երկու խմբով: Վարպետների խմբում ՀՀ գավաթակիր դարձավ Ռուբեն Մարտիրոսյանը, որը եզրափակչում հաղթեց Հարություն Մարտիրոսյանին: Սիրողական նարդիստների մրցավեճում ուժեղագույնը Պարգեւ Կարապետյանն էր, որն առավելության հասավ Նշան Թորոսյանի նկատմամբ:**

**Զույգերով (խորհրդակցելով) մրցումներում հանրապետության գավաթակրի տիտղոսին արժանացան Արթուր Մուրադյանն ու Գալուստ Ղարիբյանը, որոնք եզրափակչում հաղթեցին Սերժիկ Արզումանյանին եւ Սիրաժ Ղամբարյանին: Թիմային մրցումներում հաղթող ճանաչվեց Արտաշատի թիմը, որը պարտության մատնեց «Վիրտուոզներին»: Երիտասարդների մրցաշարում հաղթող ճանաչվեց Արտյոմ Ադամյանը՝ հաղթելով Արտաշես Գրիգորյանին: Մրցաշարի հաղթողներին պարգեւներ հանձնեց «Սիգարոն» ընկերությունը: Աշնանը կկայանա նարդու Հայաստանի առաջնությունը:**

# Տրիպոլիում Իլյումժինովը շախմատ է խաղացել Քադդաֆիի հետ

ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովը պաշտոնական այցով մեկնել է Լիբիա, որպեսզի տեղում պայմանավորվի Տրիպոլիում շախմատային մրցաշար անցկացնելու վերաբերյալ: Ինչպես հայտնի է, այս տարին ՖԻԴԵ-ն հայտարարել է Աֆրիկայի տարի եւ այս այցն էլ այդ ծրագրի շրջանակներում է: Իլյումժինովը մինչ այդ այցելել էր Զամբիա եւ Նիգերիա:

Տրիպոլիում ՖԻԴԵ-ի նախագահը հանդիպել է Լիբիայի առաջնորդ Մուամմար Քադդաֆիի հետ ու շախմատի խաղատախտակի շուրջը զրույց է ունեցել: Քադդաֆին շեշտել է, որ ինքը չի պատրաստվում լքել երկիրը, որ Լիբիան իր հայրենիքն է, որտեղ զոհվել են իր երեխաներն ու թոռները: Իր հերթին Իլյումժինովը ցավակցել է Քադդաֆիին 20-ամյա որդու եւ երեք թոռների մահվան առիթով:

ՖԻԴԵ-ի նախագահը հանդիպել է նաեւ Քադդաֆիի ավագ որդու՝ Մուհամեդի հետ, որը գլխավորում է Լիբիայի ազգային օլիմպիական կոմիտեն: Նրա հետ եւս Իլյումժինովը շախմատ է խաղացել: Շատերի կարծիքով այս այցով ՖԻԴԵ-ի նախագահը ցանկանում է միջնորդի դեր խաղալ լիբիական կոնֆլիկտի կարգավորման հարցում:

Կիրսան Իլյումժինովը բավական լավ հարաբերությունների մեջ է Մուամմար Քադդաֆիի հետ: Նրանց համագործակցությունը սկսվել է 2004-ին, երբ որոշվեց շախմատի աշխարհի առաջնությունն անցկացնել Տրիպոլիում: Դա շատերի դժգոհությունն առաջացրեց, քանի որ նոկաուտ համակարգով անցկացվելիք աշխարհի առաջնության մասնակիցների թվում էին իսրայելցի 3 գրոսմայստերներ՝ Բորիս Գելֆանդը, Էմիլ Սուտովսկին եւ Իլյա Սմիրինը: Իսկ ինչպես հայտնի է, Իսրայելի քաղաքացիների մուտքը Լիբիա արգելված է: Քննարկվում էր նրանց մասնակցությամբ հանդիպումները Մալթայում անցկացնելու տարբերակը, թեեւ Լիբիայի ղեկավարությունը հավաստիացրել էր, որ մուտքի թույլտվություն կտրամադրի մրցաշարի բոլոր մասնակիցներին: Նշված 3 շախմատիստները որոշեցին չմեկնել Լիբիա, մրցաշարից հրաժարվեց նաեւ իսրայելական անձնագիր ունեցող Բորիս Գուլկոն, որը բնակվում էր ԱՄՆ-ում: Ի նշան համերաշխության, մրցաշարից հրաժարվեցին նաեւ ԱՄՆ-ում բնակվող Ալեքսանդր Շաբալովն ու Ալեքսանդր Գրիշչուկը, ինչպես նաեւ Վիշվանաթան Անանդն ու Պյոտր Սվիդլերը:

Տրիպոլիում անցկացված աշխարհի առաջնության մասնակիցներից շատերը բողոքում էին կերակրից, ստեղծված պայմաններից, սակայն ՖԻԴԵ-ի նախագահը հայտարարել էր, որ մրցաշարը գերազանց է կազմակերպված: Լիբիայի առաջնորդ Մուամմար Քադդաֆին նույնիսկ միջազգային գրոսմայստերի կոչում ստացավ: Փաստաթղթերը ստացավ նրա որդին՝ Մուհամեդ Քադդաֆին, որը բացի Լիբիայի ԱՕԿ-ը գլխավորելուց, նաեւ Միջերկրական ծովի երկրների շախմատի կոնֆեդերացիայի նախագահն է:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով



## Կոկ Սամվելը միշտ մեզ հետ կլինի

Մայիսի 28-ին, վաղ առավոտյան զանգեց իմ հին ընկերը՝ Կարբիի Վահան Թեքեյանի անվան դպրոցի տնօրեն Արսեն Օհանյանը եւ շնորհավորեց տոնի կապակցությամբ: Թեեւ մասնագիտությամբ աշխարհագրագետ է, հավանաբար չէր հաշվարկել ժամային գոտիները եւ շատ վաղ զանգեց: Ես նրան ոչինչ չասացի, թեեւ սովորաբար սիրում եմ փնթփնթալ: Իսկ հիմա շնորհակալ էի: Ինչո՞ւ տոնը փչացնել: Բացի դրանից՝ օրն էլ չափազանց հիշարժան է ոչ միայն մեր ողջ ժողովրդի համար, այլեւ կրկնակի հիշարժան՝ մեր անձնակազմի համար: Ճիշտ երկու տարի առաջ այդ օրը «Արմենիա»-ն մեկնարկեց իսպանական Վալենսիա նավահանգստից: Յուրաքանչյուր մանրուք հաշվարկել էինք: 2009 թվականի դեկտեմբերին Աստծո բարեգթությամբ արդեն պետք է մոտենայինք Հորն հրվանդանին: Այնպես որ, հաշվարկը մտածված էր: Հարավային կիսագնդում դեկտեմբերը նույնն է, ինչ ամռան սկիզբը՝ Հայաստանում: Բայց, ինչպես հայտնի է, ճակատագիրն այլ կերպ տնօրինեց: Հենց այդ ժամանակ էր, որ իսկական վիշտը պատեց մեզ: Հիվանդացավ մեր լեգենդար կոկ Սամվել Սարգսյանը:

Եվ ահա, Արսենի զանգից հետո ես որոշեցի, որ նախապես ծրագրված, իմ կարծիքով անսովոր ռեպորտաժը փոխարինելու եմ Սամվելին նվիրված հուշով: Չէ՞ որ նա շատ էր սիրում այս տոնը: Հիշում եմ, թե ինչպես էր Վալենսիայում այդ օրը վաղ առավոտից տոնական նախաճաշ պատրաստում եւ նույնիսկ ճառ արտասանեց, որն առաջին հերթին ուղղված էր մեր երիտասարդներին՝ Վահագնին եւ Մուշեղին: Ապա ավելացրեց. «Մյուսներին էլ չէր խանգարի իմանալ»: Իսկ ասելիքը հանգում էր նրան, որ իր կարծիքով մեր համարյա ողջ ժողովուրդը բավական հաճախ մայիսի 28-ը շփոթում է անկախության օրվա հետ: «Պետք է մտցնել բոլորի գլուխը,- ասաց նա,- որ այսօր մենք նշում ենք Հանրապետության օրը»: Բոլորը լուռ լսում էին: Չէ՞ որ ազգային տոնը լուրջ թեմա է: Եվ հանկարծ մեր հենց երիտասարդության ներկայացուցիչը, ի դեմս, նավում ամենաերիտասարդը՝ նորաթուխ բոցման Մուշեղը բարձրաձայնեց իր տեսակետը. «Իսկ մի՞թե հանրապետության ստեղծումը չի նշանակում, որ արդեն կա անկախություն»: Ընդհանուր նավասենյակը լցվեց բոլորիս ծիծաղ-քրքիջով: Իսկ իմաստուն կոկը իր երկար հասակի եւ պատկառելի տարիքի բարձունքից ծերունաբար հոգոց հանելով վրա բերեց. «Է-է՜, Մուշեղ ջան, քեզ մի տխուր ճշմարտություն կասեմ: Եթե խոր մտածենք, մենք նույնիսկ Տիգրան Մեծի օրոք անկախ չենք եղել: Եվ ոչ միայն պետությունը: Մեզանից յուրաքանչյուրը: Այ, օրինակ ես: Տես ի՜նչ կախվածության մեջ եմ մեր գանձատահ Արիկից: Ամեն անգամ մթերք գնելուց հետո աչքի լույսի պես պահպանում եմ ամեն տեսակի կտրոններ ու ստացագրեր եւ նույնիսկ արտագրում եմ դրանք հատուկ մատյանում»: Այստեղ ինչ-որ մեկն ասաց, որ մենք բոլորս կախման մեջ ենք եղանակից, մեկ ուրիշն էլ, թե՝ բջջային հեռախոսից, իսկ մշտապես մեղմ ու ցածրաձայն խոսող Հայկը բարձր ու անառարկելի տոնով հայտարարեց. «Աստծուց ենք կախված մենք, Աստծուց»:

Եվ այնուամենայնիվ այդ օրը մեր տոնը կայացավ: Մեր բազմահազարամյա պատմության մեջ առաջին անգամ շուրջերկրյա նավարկություն սկսեցինք, այն էլ Սփյուռքի դժվարին ու բազմաբարդ երթուղիներով: Չէ՞ որ դա տոն է: Եվ դա կարող էր լինել միայն Հայաստանի անկախության պայմաններում: Ով-ով, ես հո գիտեմ, թե Նախիջեւանում ինչպես էր: Աշխարհաշուրջի մասին չէր կարելի նույնիսկ երազել:



Սակայն, բացի ամենայնից, այդ օրը՝ այդ տոնական առավոտյան ես ուրախ էի, որ դարձյալ շնորհիվ նորին մեծության հիշողության, մեզ մոտ եկավ մեր կոկը, մեր Սամվել Սարգսյանը: Հիշում եմ՝ ինչպես էր հպարտանում, որ բարձր հասակն իրենից ժառանգած որդին՝ պատանի Դավիթը բանակային ծառայությունը սկսել է հենց Արցախում: Սամվելը հաճախ էր մտածմունքների մեջ ընկնում (տունը, կենցաղը, որդու ապագան), բայցեւ ոչինչ նրան չէր կարող խանգարել, որ ինչպես «Կիլիկիա»-ում, այնպես էլ «Արմենիա»-ում երկտակ ծալված կանգնի հողակապերի վրա ճոճվող գազասալիկի առջեւ: Հաճախ եմ ուշադրություն դարձրել, որ երբ Սամվելը ծիծաղում էր, աչքերը մնում էին տխուր, ինչպես Մհեր Մկրտչյանինը: Հետո էր ինձ խոստովանելու, որ վերջին ժամանակները անհանգստություն էր զգում ոչ թե մարմնում, այլ հոգում: Խոսում էր իր կատարած մի ինչ-որ հայտնագործության մասին, որն անվանել էր «մահվան զգացում»: Միաժամանակ ավելացնում էր, որ ոչ մի տեղ ոչ մի ցավ չունի: Բայց երբ որդու մասին էր խոսում, ժպտում էր, եւ աչքերն էլ էին ժպտում:

«Կիլիկիա»-ի ոդիսականի վերջին փուլում ես գետային երթուղուց թռա Երեւան՝ կազմակերպելու քարշակի շինարարությունը նավը Փոթիից ցամաքով տուն հասցնելու համար եւ պահը որսալով՝ մեկնեցի Արցախ: Այնտեղ բնականաբար այցելեցի Սամվելի որդուն իր զորամասում: Լուսանկարեցի բջջային հեռախոսով: Նավ վերադառնալուց անմիջապես հետո հեռախոսը տվեցի տղաներին եւ նրանք տպեցին Դավթի լուսանկարը՝ զինվորական համազգեստով: Մի գեղեցկատես հերկուլես: Նկարը դրեցի հոր մահճակալին: Բոլորս հավաքվել էինք մեծ խոհանոց-ճաշասենյակում եւ ձեւացնում էինք, թե ամեն մեկս զբաղված է իր գործով: Ուզում էինք տեսնել կոկի արձագանքը: Սամվելին կանչեցինք: Ներս մտավ: Նրա մահճակալը ներքեւում էր, ձախից առաջինը: Մոխրագույն ծածկոցի վրա դրված էր գունավոր լուսանկարը: Սամվելը տեսավ: Աչքերը հառեց ու մի պահ քարացավ: Ապա քիչ կռացավ, չգիտես ինչու նայեց կողքերը: Դանդաղ ձեռքը մեկնեց եւ զգուշորեն վերցրեց լուսանկարը: Բոլորս կարծում էինք, թե հիմա ծիծաղելու է, հրճվելու է: Եվ պայմանավորված լռում էինք: Սամվելը որդու նկարը սեղմեց կրծքին, ժպտաց: Հետո գլխի ընկավ, որ հետեւում ենք իրեն: Ծիծաղեց: Մենք էլ վերջապես սկսեցինք ծիծաղել: Հետո մոտեցավ ինձ, եւ գրկախառնվեցինք: Աչքերը երջանիկ էին: Այդ երջանկությունը էլի ենք տեսել նրա աչքերում: Երբ «Կիլիկիա»-ի Եվրոպայի շուրջը յոթ ծովերով նավարկությունն ավարտվեց, ըստ ավանդույթի ողջ անձնակազմով մեկնեցինք Արցախ: Դա Դավթի ծառայության վերջին տարին էր: Ես խնդրեցի Արցախի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին՝ երկօրյա արձակուրդ հատկացնել մեր կոկի որդուն: Անակնկալ էինք պատրաստել, որի մասին բոլորը գիտեին, բացի զինվորի հորից: Մեկ ժամ առաջ, մինչ հյուրանոցում կձեւակերպեին փաստաթղթերը, Դավիթը մտավ այն համարը, որտեղ Սամվելն էր մնալու եւ նստեց մահճակալի եզրին՝ դեմքով դեպի դուռը: Ոչինչ չկասկածող հայրն իր բանալիով բացում է դուռը, մտնում ներս... Մեկ րոպե անց մենք բոլորս միջանցքում լսում էինք բարձր ու երջանիկ բացականչություններ: Առաջինը ես ներս մտա ու տեսա մի ինչ-որ հզոր գեղեցկությամբ զարմանալի այդ պատկերը: Սենյակի կենտրոնում ամուր գրկախառնված կանգնած էին երկու շատ բարձրահասակ տղամարդիկ: Հոր դեմքը չէր երեւում: Որդու ուսն այն ծածկել էր: Սամվելը քիչ թեքվեց կողքի: Ես նորից տեսա այն երջանկությունը, որ այնքան հազվադեպ էր երեւում նրա աչքերում:

Շատ անգամ եմ ասել, որ Սամվելը հեռացավ երկարատեւ, տանջալից մահով: Գրել եմ եւ այն մասին, որ երբ հեռախոսով կապվելով ուռուցքաբանության կենտրոնի տնօրենի հետ եւ իմանալով, որ դրությունը ճակատագրական է, որ մետաստազները տարածված են ոչ միայն լյարդում, եւ որ նման բան ի հայտ է գալիս անսպասելիորեն, ավաղ, այն ժամանակ, երբ վախճանն անխուսափելի է, որոշում կայացվեց դադարեցնել ծովարշավը:

Դա բարդ վճիռ էր: Անձնակազմը հասկանում էր, թե ինչ բարդ իրավիճակում ենք հայտնվել: Դա պարզապես մի ինչ-որ ընդմիջում չէ, հինգ րոպեով հանգստանալ չէ: Դա նշանակում էր, որ ամեն ինչ ստիպված էինք լինելու սկսել սկզբից: Ամենածանր եւ տանջալից կազմակերպչական գործընթացները: Սակայն մենք ընդունեցինք այդ որոշումը, որը կարող էինք եւ չընդունել: Ծովային տարբերակով այն այլընտրանք չուներ: Եվ ասեմ, որ ամենից շատ դա գիտակցում եւ հոգեպես տանջվում էր ինքը՝ կոկ Սամվելը: Նա կանխազգում էր փոփոխությունները հասարակական կարծիքում, որը տարբեր շրջանակներում, բնականաբար, միանշանակ չէր: Մենք բոլորս հաճախակի էինք այցելում Սամվելին, տեսնելով, թե ինչպես է նա օրօրի բառացիորեն հալվում մեր աչքի առջեւ: Եվ դեռ բավական չէ, ինչպես հաճախ է պատահում նման դեպքերում, չգիտես որտեղից հայտնվում են բժշկության անզորությունից ուրախացած հեքիմներ, որոնք օգտվելով ընտանիքում ստեղծված հոգեբանական, երբեմն էլ հոգեկան իրավիճակից, բուժման իրենց մեթոդներն են առաջարկում՝ անհավատալի գումարներով: Դա էլ ահավոր խնդիր է, որի մանրամասների մասին այս դեպքում պարզապես չեմ ուզում խոսել:

Մի քանի անգամ Սամվելը հարազատներին ու մերձավորներին խնդրեց մեզ մենակ թողնել: Իսկ վերջին անգամ խնդրեց, որ ողջ անձնակազմը գա: Եվ ես լսեցի նրա հիրավի փիլիսոփայական խոստովանությունները: Դրանցում սերն էր ընտանիքի, անձնակազմի, Հայրենիքի հանդեպ: Եվ ամեն անգամ նա պահանջում էր, աղերսում, որ մենք չսպասենք, ինչպես ինքն էր ասում՝ անխուսափելի վերջին եւ շտապ թռչենք Բուենոս Այրես, որտեղ որբացած մեզ էր սպասում իր այնքան ջերմորեն սիրված «Արմենիա»-ն:

Աշխարհաշուրջի պարտադրված երկրորդ փուլին նախապատրաստվեցինք ուղիղ քառասուն օր: Մեր կոկի, մեր Սամվել Սարգսյանի , Դավթի հոր մահվան հաջորդ օրվանից: Նա շատ էր սիրում, երբ իրեն կոչում էինք Դավթի հայրիկ: 2010 թվականի նոյեմբերի 22-ին նշեցինք Սամվելի քառասունքը, որին ներկա էր արդեն նոր կոկը: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 23-ին թռանք Բուենոս Այրես:

Ինչպես հաճախ եմ նշել, յուրաքանչյուրիս նավասենյակում փակցված են մեր մայրերի լուսանկարները: Նավին հրաժեշտ տալուց առաջ Սամվելը հանեց իր մոր՝ տիկին Մարգոյի նկարը: Նա գիտեր, որ այլեւս չի վերադառնալու «Արմենիա»-ի տախտակամած: Առաջին օրն իսկ Մարգո մայրիկի նկարի տեղում մենք դրեցինք նրա որդու լուսանկարը, որը հիմա միշտ մեզ հետ է լինելու: Միշտ:

**ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ**
**Հնդկական օվկիանոս**

## ԱՄՆ-ում մշակվում է «ստվերային» ինտերնետ այլախոհների համար

**ԱՄՆ իշխանությունների նախաձեռնությամբ մշակվում են տեխնոլոգիաներ, որոնք թույլ կտան կարճ ժամանակամիջոցում ստեղծել ինտերնետային եւ հեռախոսային կապի ինքնավար համակարգեր: Այդ մասին հաղորդում է «Նյու Յորք թայմս» թերթը: Թերթը նշում է, որ նման համակարգերի շնորհիվ հնարավոր կլինի միասնականացնել ընդդիմության գործողություններն այն երկրներում, որտեղ իշխանությունները վերահսկում եւ ըստ ցանկության անջատում են ինտերնետն ու բջջային կապը:**

**Նախագծի շրջանակներում ենթադրվում է ստեղծել շարժական սարք, որը հնարավոր կլինի անցկացնել որեւէ պետության սահմանով եւ այնտեղ արագորեն կարգավորել անհաղորդալար կապ: Վերջինս մասնավորապես թույլ կտա միանալ համացանցին:**

**«Նյու Յորք թայմսի» տվյալներով, այդ մշակումներին արդեն հատկացվել է 2 մլն դոլար պետական դրամաշնորհ:**

**Թերթը նշում է, որ ԱՄՆ-ը նշանակալի ջանքեր է գործադրում արտերկրում կապի համակարգերի ստեղծման եւ պաշտպանության նպատակով: Այսպես, առնվազն 50 մլն դոլար է ծախսվել Աֆղանստանում այնպիսի հեռախոսակապի ստեղծման համար, որը թալիբները չէին կարողանա անջատել (տվյալ կապը գործում է ռազմակայանների տարածքներում գտնվող աշտարակների շնորհիվ):**

**Պ. Ք.**

Եվրոպահայեր
evropahayer.eu
Նոր՝ հնգալեզու հայկական սոցիալական ցանց՝
www.evropahayer.eu
▼ Մնա կապի մեջ ընկերներիդ հետ
▼ Գտիր կյանքի ընկեր Եվրոպայում
▼ Գտիր գործընկեր Եվրոպայում
▼ Եւ շատ ու շատ ավելին
Միացե՛ք մեզ, եւ Ձեզ սպասվում են հետաքրքիր ժամանց եւ հետաքրքիր կոնտակտներ!

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 13.6.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: